



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

91.99.  
L-43

Nº 105605 50

1125

5 .02. 2013

891-99

U-43

## ԲԵԴԱՐԱՏ ԸՆԹԱՎԵՆՑ

19 NOV 2010

23 JUN 2005



# ԲԱՆԱՍԵՂՑՈՒԹԻՒՆՆԵՐ

1006  
29312

Դրեակ, բողոքի և այստան,  
Թռող մարդիկ ենց միշտ կարդան.  
Քո ցաւերդ իմանան  
Կւեւանց ձեռքում ունենան:

## ԱԹԱԳԻՆ ՀԱՏՈՐ



## ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՎ


*Տիր. Օ. Պուհյանց. || Տպ. Յ. Սահմանացի*

1903

ՀԱՅ ՀՈՎՐԵԼ ԱՆԻԿԱՆ  
ՀԱՅ ԲՈՒԺ ՏԵՐԱՎՈՐ  
ՀԱՅ ՀՈՎՐԵԼ ՍՊՐԱ  
ՀԱՅ Ա. ԽՈՎՐԵԼ

18.518

Дозволено Цензурою Тифлисъ, 24-го Июня 1902 г.



Բազմատ Աղաբակեանց:

## ՅԱԹԱՏԱՐԱՆ

Սիրելի ընթերցողք, ներող եղեք զբայկիս թերութիւններին,  
որովհետև ես խոստովանում եմ «ՓԱԿ-ԳՐԻՇ» զբայկիս յառաջարանի  
մէջ, քանի որ նուաստա արհեստաւոր լինելով իսկապէս նուրբ  
զբական բարբառից չեմ կազմում, այլ աշխարհաբառ բառերով և ժո-  
ղովրդական, մանաւանդ, հասարակ ժողովրդի համար այսպէս աւելի  
մատչելի է լինում խօսել, քան թէ զուտ քերականական ոճերով,  
գորա համար փութացինք չը փոխել հեղինակիս «ՓԱԿ-ԳՐԻՇ» զբած  
նոյն տեսակ բառերով խօսել զանազան մաքերի վերայ և իրա-  
ւացի բողոքել:



## ԻՐ ՄԹՑԻ ՎԼԵՔԵԲԸ

Քեզանից քեզ գանկատ ունիմ, ով Արարիշ Դու, գլժա,  
Քո տուածը բաւական չէ, ստացական թէ չկայ.  
Երկուսն էլ հարկաւոր է, առանց սոցա փայլ չկայ,  
Խեղճի համար աշխարհումը անբախտութեան չափ չկայ:

Ես նման եմ մի անխնամ բաղմատարած պարտիզի,  
Բնութիւնը չնորհել է վարդն ու սոխակ մէկ լինի.  
Չը լինելով մի պարտիզան, որ վարդերին հոգ տանի,  
Ամայի եմ, նման վայրի, քամուց տերես թնդ թափի:

Բազարատս, բացի իմս, ստացական չ'ունեցայ.  
Ունեցածս չէր պատուաստած, մի լաւ արդիւնք չ'ունեցայ,  
Տեսրով մարդ եմ, դիրքով փոքր եմ, ուսում, դիպլոմ չ'ունեցայ,  
Ճնայ աշխարհ, և գնում եմ բոլոր հիմով խորտակուած:

1-ի Մայիսի.



### Տ Ե Ղ Ա Ն Գ

Տաղանդը նմանում է այն մետաղին, որն է ոսկի.  
Թէ հանքից ձուլուած է, կոպիտ թողած է, չի փայլի.  
Հանգամանքից ստիպուած, որ հոգի մէջ կը ծածկուի.  
Որքան որ մնայ, գոյնը չի վնալ, միշտ նա փայլ ունի:

Եկաւ այն օրը, բերթելով հոգը, բացուեց ծածկոցը  
Երեաց ոմանց, չհասկացան պիտանի լինելը.  
Երբ պատահան յանկարծ քննելով մասնագէտները,  
Վեր առան զննեցին, հասկացան թէ ինչ լինելը:

Տուին մեքենային, շփելով մաքրեց իւր գոյնովը.  
Պարունակեց իւր մէջ, ցատկեց ճառագայթի լոյսերը  
Քարեղինով զարդարուեց, գոյն-գոյն արքայափայելը.  
Օրէ օր փայլում էր, քաշում էր որպէս մազնիս իւր կողմը:

Թնդ դարեր անցնին, ոսկին հոգի մէջ դարձեալ չի փթի  
Ի մէջ պահարանի կամ կրակի, մի օր լոյս կը տեսնի.  
Բնութեան տուածը որքան կամիս շեղել չի լինի  
Երբէք նորան մաշող և կլանող յաղթող չի լինի:

Լաւ յատկութիւն ունեցողը միշտ վեհանձն է այսպէս  
Իւր նշանակութեամբ վատից զանազանում է այսպէս.  
Մետաղները հաւաքելիս, նա շողողում է այսպէս  
Փաքը ուժով, մեծ անուամբ իշխում է մշտական այսպէս:

Բազարատ, բարի յոյսերը որքան մնան, կ'ամին,  
Ոսկի անուն ունեցողը վաստակ ունի, չի կորչի.  
Պարզ գործ է, որ ցանցառները իմաստնագէտ շեն լինի,  
Ոսկին միւս մետաղների հետ համեմատել չի լինի:

2-ն Մայիսի:

### Զ Ե Ր Մ Ե Ն Գ Ը Յ Ս Հ Ե Ր Ց Ի Ն

Զարմանք է այս հարցին, ամէն տկարին բժիշկ կայ,  
Արհեստական փորձի զիւտով զտած զեղեր կան,  
Տալիս են մարդկանց, որպէսզի շուտով առողջանան  
Իսկ մարդկանց բնութեան տկարին մի հնար չկայ:

Ով որ լուսաւոր գաղափարով ասպարէզ մտնէ  
Այս կերպ տկարին դեղով կամ խօսքով առողջացնէ  
Անպիտան հոտը շատերի բմբից շուտ հեռացնէ,  
Միակ բժիշկն է կրթութեան գծերն, որ կ'ուզգէ:

Հասարակ ցաւին սաստիկ կերպով միտք են դարձնում,  
Այս անբժշկելի տկարին ոչ ոք չէ հետևում,  
Օրէցօր վերքերը, ցաւերն են շատանում,  
Թէ չառողջանայ, սրանցից ինչ է սպասում:

Խնդրում ենք, բժիշկ, որ այս ցաւերը առողջացնես,  
Զանքով աշխատիս, մի հնարքով գարշահոտը կտրես,  
Քաջ յայտնի է, որ շես կարող բոլորին բժշկես,  
Ո՞վ ես, մարդասէր, ուզիդ ճանապարհից ըլ շեղուես:

Վաստակիդ զուր չի անցնի, երբ կատարելազործես,  
Քո անունը հաստատ բժշկապետ կ'անուանես,  
2ի թառամի այդ գործը, ցնծութեան ձայն կլնես,  
Կամայ-ակամայ սպաշտոնէ, անձդ սէտք է առնես:

Բազարատ, դու ևս պաշտպան կեցիր այսպէս զործին  
Մի գուցէ լսողներն կարգ-կարգ խմբեր կազմուին  
Յաւոց փարատութիւն, սրբազն պարտք կը համարուին,  
Ով տանչէ բժշկին, Արարշից նորանք պատժուին:

3-ն Մայիսի:

Բ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Գ Ո Ր Ժ Բ

Երկինք և երկիր հսկող Արարիչն նա մեր,  
Իւր բնութեամբ զուգեաց, զարդարեց աշխարհը մեր,  
Նշանաւոր անդամ կարգադրեց պատին մեր,  
Համապատասխան ընկեր օգնական ծնուեց մամը մեր:

Լրացուց ամենայն առատութեամբ բուսեղէն,  
Անհամար անսառոնք, թռչունք և սովուններ,  
Մեծ հայեացը զիտեց շրջելով նա, Տէրն մեր,  
Լիակատար տեսնելով հանգիստ էր իւր գործէն:

Նախամարդկանցը պատուէր արաւ ու հեռացաւ.  
Ճատ երկար շտեեց, սուրբ խօսը մերժուեցաւ,  
Այն օրից չը պահեցին, պատուէրն իզուր անցաւ,  
Սկսելով վատութիւն, քայլափախ մհծացաւ:

Ի՞նչ ստիպեց շուտով քայլայել սուրբ խնդիրը,  
Ո՞րտից սովորան, ով առաջնորդեց վատութիւնը,  
Մեղադրել չէ հարկաւոր այժմեան մարդկանցը  
Օրինակ ունին ծերունի հեղինակիցը:

Մարդիկ իւրեանց կարծելով աշխարհը մի մեծ բան,  
Հաւասար մրջիմին, չափով բղէզի նման,  
Ճարժում են ամեն տեղ փոքր ճիճուի նման,  
Փոթորիկով անհետանում են կոյտի նման:

Դիշերուայ հանգիստ օրօրը բնացում է,  
Լոյսի զանգակը հնչելով զարթեցնում է,  
Լուսինը ամեն տեղ շրջելով լուսաւորում է  
Գետը խշալով՝ ալիրը սկ պղտոր զնում է,

Իւրաքանչիւր անձ իրա հաճութեամբ ուզում է,  
Ճկելով գէպ իրան առաջ հրաւիրում է,  
Ասելով ուզիղ ճանապարհ զտայ, խօսում է,  
Իսլիցնելով ուզզութիւն, գործը ծռնութիւն է:

Մարդկանց մէջ բարի յոյսերը գեռ չեն խնամուած  
Լուսաւոր գարի հետ. բռնել են վատ ընթացք.  
Զղցացէք, մարդիկ զուր, միք անի միշտ կոտորած.  
Նայեցէք ձեր Տիրոջը, ոչ այնպէս կուրացած:

Թէ որ լուսաւոր ենք և թէ մարդ ենք խելացի,  
2ը պէտք է նմանինք կոպիտ վայրենի քուրատի,  
2է որ հասկանանք, զգանք, օգնողներ կըլինի,  
Ուսում վիտութիւն, թէ շուտ ընդարձակուի:

Հաշւում ենք լուսաւոր, դարձեալ մութ խաւար ենք,  
Հին գարերից է մնացած, եղբայրատեաց ենք,  
Արտաքին կրթուած, ներքին փշացած ենք,  
Կրճատուում է հասակ, անմտութեամբ փակուած ենք:

Թէ հարցանենք զարգացումը մարդկանց պիտոյք է,  
Վահելով կոպիտին, նուրբը տեղաւորուում է,  
Ընդունակ մարդկանց տաղանդը իւր մէջ աճում է.  
Տգէտն ի՞նչ գործի մէջ որ լինի, միշտ յետ է:

Բագարատս թող չընմանի անհոտ տերեկի  
Ամառն շողչողի, աշունը զուր թառամի,  
Անհշան բոյսի նման հողին հաւասարուի.  
Անմիաբանութիւններից սիրտս կը տիրի:  
4-ն Մայիսի:



### Յ Ե Ւ Ա Լ Ի Վ Ե Շ Ե Կ

Ես միայն օրօրօցում չեմ յիշում ոչինչ նեղութիւն,  
չայրս էր մօտս, մայրս էր զրկում, կուրծքին էր սեպում,  
ծնողական կուրծքից հոսում էր մնունդ, միշտ կերպիրում  
**Մանկիկ ժպիտով ստինք եմ ծծում, ինձ ուրախութիւն:**

Եկաւ փաթաթոց քանի կտոր խանձարուր ինձ պատեցին,  
Գժի պէս պատժուած, սաստիկ կապեցին, օրօրոց դրին,  
Թարմ ուժերս խոպառ թմրեցին, ձայնս հանեցին  
**Մայրս անուսում, կ'ատէր նա թողնում իրա զաւակին:**

**Օրօրոցը օրելիս, մայրս ինձ օրօր էր երգում.**  
Երկրորդ որդին էի. մեղքահամ կաթից շատ էի ծծ բամ.  
Անուշ «հանիկը» մատաղ հասակիս ինձ ննջեցնում  
ծնող պարտական բնական սիրով նա էր ինամում:

Կապանք երբ արձակուեց, սոխակի պէս էի **թռչկոտում,**  
Անցաւ ժամանակ, այլ կարօտ չէի կապի, օրօրի,  
Կաթից այլ շտուեց մայրիկս, ապշած էի նայում,  
Այդ աւուրից սկսուեց պակասել բախտը իմ կեանքի:

Քիչ մեծացայ, հայրս կարդալու տուեց ծեր կտո՞չ մօտ  
Այբբեն գիմով ուսում առայ, գիրքս էր տախտակ կըկոտ,  
Քնից զարթնայ, ինքս չը տեսայ ուսումնարանի հոռ,  
Աշխարհ ծնայ, ես մեծացայ, ցաւերս արինահոտ:

Երբ լրացաւ տարիս, քսան մէկ էի բուռն կրակ՝  
Ամպի նման որոտում էր սրտիս խորքից բաղձանք,


Մենամարտում էի յանկարծ բաղդիս լինէր մի ճրագ  
Ուժեր խորտակուեց և իմ չանքեր ցաւերս իմանաք:

Մանկութիւնից պատժուած, նրտից եկաւ բախտատեցը,  
Բախտը սուրբ է, որ միշտ կենդանի է պահում մարդկանցը.  
Այդ ես չունիմ, զրկուած եմ այս աշխարհի կեանքիցը  
**Ո՞վ անիրաւ, բաւ է զու ինձ վշտացնես իմ կեանքը:**

Քո անիրաւ բազուկիցդ ես կրում եմ հալածանք,  
Ապառաժ ես և քարացած, կը տաս ինձի տառապանիք  
Խնդիրմ թոյլ տաս, ծերացրիր, խաւարեցիր իմ լուսնակ,  
Ես չը պրծայ քո ձեռիցդ, արիր խոպան աւերակ:

Ո՞վ բագարատ, այդքանը լսելով բաւական է քեզ  
Թէ տեսել ես այոչափ օրեր, ոչ երանի է քեզ  
Նման սորան իմ թշնամիս պակաս չըմնաց, արաւ,  
Ոյժ սպառեմ, մերթ հանգած եմ, հոգիս, սիրտս վախճանաւ:

### 10-ի Մայիսի



ԱՅԽԱԲՀԻ ԹԱՅՆԸ

Աշխարհը հեղեղ է բարձրացել, ալիքներ կ'որստար,  
Քաղցը թոյն է մարդկանց համար, կերակուր սննդաբար.  
Ուսում չեն զգում միշտ պէտք է տանջուին անդաբար,  
Յոյս չունին, լուսաւոր չեն, որ յիմանան արհեստաբար:

Դառն բաժակ ընդունում են անօգուտ ցաւոց համար,  
Սրաբիշը թոյլ է տալիս մարդուս իր իշխանաբար,  
Ամենայն մարդ «Կա» երով է բաղկացած իր զեկավար  
ծնում, մեռնում են, քիչ է դժնուում առողջ գաղափար:

Թէկ կան շատ լաւերը, որ մեզանում քիչ են ճարտում,  
Ներկայ գարի վատը տեսանը, լաւի անունն է լաւում,  
Մորթն սպիտակ, հոգին սև սաղայէլի պէս խօսում,  
Մի հասարակ շահի համար, մարդկանց սիրան է սրսում:

Փոքրանալով մկան նման, մեծ աւազակ պարկը ծակով  
Մտնում է մէջն ուզածն անում, անմեղ հոգի վրդովող,  
Սրբաշնը քայլայելով, աւեր գարձուց շար սոսիս  
Մի օր իրա թակարդով պատժուում է բռնաբարող:

Երկու ոտքով գաղաններ կան, նմանում են մարդակերով,  
2որերոտաց անուն կայ, չեն պակաս նրանցից  
Իրանք ծառայ կամ գործիքներ, վարւում են անսանց կերպ.  
Ստելով ճշմարտութիւն, հաստատում են անօրէնից:

Քաջ յայտնի է, գնալով առաջ է ընթանում ստ է  
Երբէք սրան փակող չի լինի, յաղթող է հանդիսացել.

Ասպարիզում պեր է խաղում, հերոսը ինչ է պաշտել  
Ով առաջնորդ, նա զեկավար կարիճ զինուոր է դարձել:

Վահ, ինչ անեմ, ուզզախօսին շըկար յարգանք ու պատիւ  
Ճշմարտութեան արև փայլէր, տարածեալին մի հովիւ  
Հնչէր փողը անմահ ձայնով իւր կանոնով մի լրիւ  
Լոյսը մթի քողը պատռէր բուրէր հոտը անմահիւ:

Ազատութեան ձայն անուշիկ աւետելով ամեն տեղ  
Նա մանաւանդ այն երկիրը կային այնտեղ կոպիտ ցեղ  
Սուրբ պայմանով և հաստատութեամբ բռնէին իրար ձեռ  
Եյն ժամանակ ուրախութեամբ մարդկանց ասես ենին լեռ:

Քաջալերելով իսկ հայրենիք ծեր և մանուկ խմբերով  
Գոռուն, թնդիւն ճիշ բարձրանայ պաշտպանէին մի զիբքով  
Հալածէին շար բռնութիւն, աբձակէինք մեծ շղթան.  
Սուրբ պայմանի «Թրօշակը» ձեռքերն առած ունենան:

Բազարատս միշտ բողոքելով ես առաջ ընթանամ,  
Փոքրութեան ոյժս ժողոված, մեծ ցաւերի գիմանամ,  
Հառաշելով ձեռս դատարկ օգնութեան կարօտանամ,  
Խեզրէք մեր Տիբոցէն շուտով մահ զերեզման ես զնամ:

15-ն Մայիսի



## Վ Ե Ց Խ Ա Բ Ա Կ Ե

Վաշխառուն ծծում է խեղճի արինը չի խնայէ  
2ի զգայ որ նա էլ իրա շքաւոր խեղճ եղբայրն է  
Այդ ձև մարդկանց պէտք է լինի խիստ դատաւոր որ դատէ  
2քաւորը զրկուած է իւր կեանքից, ինչ օրէնք է:

Նպատակն է միշտ առերես փարխսեցի ձեանալ  
Ներքին կերպով պատառող անխիղճ գայլի պէս կը գողանայ  
Ոչխարների հօտ է սիրում, մէկը ուտէ ուրախանայ.  
Դա է զաղան բորենու ցեղ. ուժեղ կերպով կ'որսայ:

Օր չի լինի որպէս որսորդ մի քանի որս չ'ունենայ  
Թակարդներով, ուռկանով մեղմ կերպով կը մերձենայ  
Անմեղ մարդիկ շիմանալով որպէս թէ բարերար է,  
Հաւատացնելով մարդկանց իրեկ ճշմարիտ մարդ է:

Կարճ միջոցում, փոխանակ բարութիւն մնանկացնում է,  
Անխիղճ տոկոսներն ամեն օրէնքից հեռու է.  
Սկիզբն ով հանդիպաւ, մտածմունքը միշտ ծուռն է  
Որքան ապրաւ, շը լսուաւ գործը ուղիղ անցկացնէ:

Բագարատիս զբոյիներով մարդկանցը ցոյց կ'անեմ  
Դեղօրայքը փորձուած են «Փակ-Գրչումբ» զրած եմ  
Բժշկով թէ որ լինի, դարձեալ մի գործի պէտք կը գայ  
Մտածում եմ քաջառողջ եմ, ուժիս համաձայն չըկայ:

25-ն Մայիսի



## Ժ Ե Փ Ե Ց Ա Ղ Ե Կ Ե Ց Ա Կ

Ո՞վ տիրացնու, հոգով ծառայում ես սուրբ եկեղեցու  
Արժանավայիլ կոչմանդ միշտ դու հարազատ եղիր,  
Օրինակներ աչքի առաջ դու ուղղութեամբ ունեցիր,  
Պաշտօնում վստահ եղիր, խորհուրդները քննուելու:

2ը լինի թէ վատ ընթանաս Փրկչին մերոյ սուրբ տաճարի,  
Մի գուցէ սխալիս դու, զանձի համար կոչման փութաս,  
Քահանայի պաշտօն ցանկաս, եկեղեցու «հօթ խորհուրդի»,  
Այլ ձեռվ յաջողցնես, կաշառովդ շուտ ստանաս:


29312

Երբ հագնում ես հանդերձդ խորհուրդներով քահանայի,  
Դու լաւ գիտցիր, որ այն ժամանակը չէ կը խրատեն.  
Մտիր տաճար, իսկ քաւարան, հմբից մինչ վերջ սուրբ Փրկչի  
Եթէ քանդես հիմք հայրենեաց, անիծելով յետ կ'առնեն:

Լաւ է լինիս ճիշտ աշակերտ սուրբ խորանին մշտական,  
Պատուէրները միշտ լսում են, մաքուր լեզուիդ է պատկան,  
Մտիր եղիր միշտ հոգով Տէրն աղօթիր մշտական,  
Պանձի համար ջանալ չէ պէտք ժամանակին քեզ կ'ըտան:

Թէ ուղում ես մեղի համար լինել պատւով դու հովիւ,  
Յարգէ տաճար և ժողովուրդ քո ուղղութիւն ու պատիւ  
Պարէ պաշտօն բեմի միջից բոլորիս ալ քարոզիր,  
Գլուխ ազգի դու կարապետ, պաշտօնովդ միշտ փայլիր:

2ենք յուսայ որ մինչեւ գաւ օրինակ կարգաւորի,  
Կեղծ դիմակով և լուսանեամբ նմանում ես տէրտէրի



ԶԵՆ ամաշում ըմպում են հայհոյում են ժողովրդին,  
Թէ որ պէտք է մեզ քարոզես, պահէ պատուէր, նոր խօսի:

Եթէ ոչ, այս տեսակ քեզ կպախարակեն, լուրջ կեցի,  
Ով Սրարիշ, ես մեղայ, փողս մին մին հաւաքեցի.  
Կնքեցի, մկրտեցի, սաղմոս ասի, միշտ թաղեցի,  
Վասն բռ ժողովրդին, միշտ պատարագ մատուցի:

Որպէս մշակ վարձն իւրոյ մտօքս յարմար Համարեցի,  
Ազնիւ կինս խիստ գեղեցիկ տարայ փափուկ հագուցի.  
Կերաւ, ինձ շատըմ օրհնեց, պահանջները լրացուցի,  
Բագարատս քեզի վրայ խորհելու ինչ ունէի:

16-ն Մայիսի



Ե Բ Ճ Ե Ն Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ով երջանկութիւն, գովելի ես ընդհանուր գիրքով  
Լուսատու լուսնակ, իսկ ծաղկուն պարտէզ քո փայլովդ  
Կաթնատու ազբիւր, մաղղկանց երջանկութեան վառ ճրագ  
Վառում ես միշտ, չես թողնում, որ մերձենայ այրէ կրակ:

Թշուառութիւնը միշտ խաւար է, իսկ դու լուսաւոր ես,  
Մատակարար է քո նիւթովդ, ոչ ոք չի լինի քեզ պէս,  
Փայլուն գործիշ, ուժեղ առիւծ թաթիկովդ պաշտպանես,  
Հսկայ գիրքդ և քո անուն լսովներուն սարսափ ես:

Հերոսական վեհանձնութեամբ պաշտօնդ կըկատարես,  
Ով թառամի կամ վախճանի, իսկ դու մնաս յաւիտեան,  
Ջատ մարդիկ քեզի ցանկան, գեղեցիկ կեանք ունենան,  
Թէ մօտենաս պահանջողին պատիւ լաւ օր կունենան:

Այդ քո մասին միշտ խորհում են, տրտումնստած ու խօսում,  
Ինչ ստացան, ինչ լիմարացան, այդ պահանջն են ուզում,  
Իզուր միտք է, սխալ քայլ է, թէ որ զիտաս մէկ հաշում  
Այդ խնդիրը մի այլ հարց է, որ մարդ է թելագրում:

Զուրկը ով է մշտական, պատժուած է այդպէս փառքից  
Ով ապահով նա հանգիստ է այս աշխարհը իւր կեանքից  
Ով առաջ է, նա հարուստ է, քանի քաղում գանձերից  
Լաւ մտածիր ասածներիս, թէ մէկն ունիս սրանցից:

Ահճարացած քաղցր թոյնը դու կամաւոր ընդունէ  
Վաղ ժամանակ պատճառ եղիր, գոնեա խնդրէ մահ քերէ.

Այդ էլ բաղդ է, թէ ազատուիս այդ սոսկալի գաղաճէ  
Այդ կերպ մարդիկ աշխարհ շատ կան միայն դուքեղ մի հաշուէ,

Բագարատս ներկայիս այդպիսի շաբքում կանգնած եմ  
Հասակիս մեծ մասը սև օրերով անցկացուցած եմ  
Մնացորդը աւելի դառ կը լինի, չը մտածեմ  
Քանի ոյժս ինձ պահում է, աշխատութիւն կը սիրեմ:

20-ն Մայիսի:



### ՏԵՇԵՐԻ ԵՂՔԱՑ

Սուրբ տաճարի գոան առաջ նստած էր,  
Մաշուած մի տնանկ, արտասուք թափում էր,  
Այդ խղճալին ողորմութեան կըսպասէր,  
Փնթփնթալով նա կ'աղօթէր, եղբայրներ,

Վշտահայեց և լալազին աղերսում  
Յանկալծ մէկը ծաղրելով գթաց խեղճին  
Տուեց նորան քարի կտոր կոյր աղքատին  
Խեղճ մարդը շօշափելով առաւ ձեռքում:

Ճատ տանջուած խնդրում էի քեզանից սէր  
Աւազ, բայց դու ինձ խարելով այս տուիր  
Այլ ինչ ասեմ, իմ յոյսերս խորտակեցիր  
Աստուած քեզ հետ, միւս անդամ մի անիր:

Բագարատս այս զործին ներկայ էի,  
Նա հեռացաւ երկու կոպէկ ես տուի  
Ինձ շատ օրհնեց, շուտ հեռացաւ վշտալի  
Միթէ մարդն այս աստիճան ցած կ'լինի:

20-ն Մայիսի:



ԹԻՄԵԸՆՅՑ ԾՈՒԹԻ ՆԱՅՈՂՆԵՐ

Ասիայի մարդկանց մէջը մի այլ հայեացք կայ  
Զարգացածը իրա եղբօրը չի ցանկանայ  
Լոյսի մասից մի մաս չի բաժանի նորան տայ  
Գոնեա նա էլ ուսում առնէ նրբանայ:

Եյս խղճալի անուսումը չգիտութեամբ  
Միշտ նայում է իւր եղբօրը անկրթութեամբ  
Որպէս զի տեսքը փոխուած, այլ գոյնով ծռնութեամբ  
Եյս երկումն ալ հակառակ են միաբանութեամբ:

Ազնիւ ուսեալ, միթէ դու նրանից բարձր չես  
Ամեն խօսքին տեղիք կըտաս, կըպատասխանես,  
Դու աշխատիր, որ մի հնարով նորան ուզես  
Եթէ չանես, կամ չըհամբերես, կրթուած չես:

Զարմանալի է, որ դուք չէք սիրում միմեանց  
Հէ որ գիտեմ դուք եղբայր էք հարազատ մի անձ,  
Քաջ յայտնի է զարգացածը վեհանձն է կանգնած  
Առ օրինակ ուսման կէտից լինիս խոնարհած:

Զատ գեղեցիկ, ես տկար եմ և անբան, անկիթթ  
Դու հասկացող և շատ ազնիւ յարմար ուսումիդ  
Ստախոս ես և շատ ատող քո ազգականիդ  
Պատահել ես, խնայում ես անփող բարեդ:

Լաւ հասկանանք, մեր երկիրը գեռ ուսեալ թիշ կայ  
Որովհետև նմանութեամբ տեղին պատշաճայ,

Ուսեալներից մշտական պահանջողներ շատ կայ  
Տեղիս մի կրթուածը կիսավայրենի այ:

Ուզիդ խօսինք, Ասիան ընդհանուրով յետ է  
Պատրաստ նա կանգնած միշտ օտարին ծառայում է  
Թանգ գնելով, պակաս ծախելով միշտ տնանկ է  
Թափեւմ են քրտինք, կը տան ուրիշն, անվայել է:

Ոչ ոք չը մտածէ, ցաւը բոլորինս ալ է  
Գնալով կամաց-կամաց վէլքը խորանում է  
Հարկաւմը է զարթել, թէ ոչ, տկարութեն է  
Մի կերպ օգնել միմեանց, սա լուսաւոր դուռ է:

Բազարան, աշխատիր դու ուզգութեամբ ծերանաս,  
Պալոք է մշտական նշմարիտ հոգով վերանաս,  
Եյս է վայել աշխարհիցը պատուով հեռանաս,  
Բալութեամբ պատած մինչի մահ անուն ունենաս:

22-Ն Մայիսի



ԳԱՍՏԻՐԵԿԻ ԾՆՈՂՔ

Ծնող լինելու համար շատ մեծ պարտականութիւն կայ  
Ելք ծնողը իւր մեծ ծանր պարտքը պէտք է կատարէր  
Մայր ծնողը ունի անհրաժեշտ ծառայութիւններ  
Միմեանց օդնութեամբ միշտ պարտական են կատարել ու:

Այս երկու անդամք ընտանիքի հրեշտակներ են  
Սոքա նախառառուցիչներ հաշւում են որդոց համար  
Որովհետև սեպհական վարժարան է տղոց համար  
Եթէ զիտնան իւրեանց պարտքերը, կըզաստիարակեն:

Ով չը զիտէ, կամ չի կամենայ այս գործը կատարել  
Անպիսիք ինչ ծնող են, տես, քանի զաւակ են ծնել  
Անպէտք մարդիկ միշտ իւրեանց նման զաւակ են պատրաստել  
Քիչ են պատահում, որ սորանցից մարդիկ են գուրս եկել:

2<sup>է</sup> որ մարդը միշտ անուսում է ծնել մի տեսակ  
Բայց չանալ է պէտք որդոցը գցել կրթութեան տակ.  
Միթէ բաւական չէ, անօգնականի գործը տեսանք.  
Լինի մեղ սուրբ իւրատ, որ բարի գործից յետ չըմնանք:

Յատուկ ես ինդրում եմ բոլոր ծնողաց որ խրատուիք,  
2<sup>եր</sup> որդոց համար մարդ նմանելու չանքեր ունեցիք,  
Դուք էք պատճառ նորանց, ընութեան պարտքը ճանչցէք,  
Չաւակներդ մեղաւոր չեն, որ դուք նրանց կըպատճէք:

Հազար երանի նոցա, որ ունին բարի հոգատար  
Իւրեանց զրկում են կրթութիւն պատրաստել որդոց համար:

Այգպիսիքը նմանում են անմահ յիշւող բարերար  
Ծնողը գլժամէր, անկեղծ, գուը մարդիկ էք հոգատար:

Բագարատս երբ որ տեսայ այսպիսի ընտանիք,  
Պաղատու ծառներ, համեղ պտուղներ զովասանք ունիք,  
Սիրտս է պայծառ, ուրախանում եմ, ինձ է աւետիք,  
Փարատուած կըլինիմ տանջուած ցաւից, ով մարդիկ:

23-ն Մայիսի:



## ԱՌ ՄԵՔՔՈՒԹԻՒՆ

Լոյս մաքրութիւն ի՞նչու մեզանից շուտ հեռացար.  
Ճուտ յոգնեցիր նեղանալով և չդիմացար.  
Դու փախչում ես հիմա մեզանից խռովիցար.  
Խնդրում ենք խօսիս, ցաւդ յայտնես մեզ, բարերաբ:

Համբերութիւնն մեծ տաղանդ է, արի, արի,  
Չէ որ մենք անմիսիթար ենք, մտքումդ ունեցիր  
Գթա դու մեզ, փռէ լոյսդ մուլժ խորչն երկրի.  
Պատիւդ հիմա ճանաշում ենք արի, արի:

Մենք լաւ կըհասկանանք, ըեղ միշտ ցաւեցնում ենք,  
Բայց դու ներիր, շուտով յետ դառիր, մեղ խնայիր,  
Աղաշում ենք, մի քիչ խղճա, ցաւօք մի տանչիր,  
Ոչինչ շունինք, թէ որ այս յոյսն ալ շըպատպանենք:

Պարզ յայտնի է, այս վէրքը շուտ չի առողջանայ  
Աշխատել է պէտք, խօսելով ոչինչ դուրս չի դայ.  
Այս գոյնը քանի մեզ ներկում է օրերս է սա.  
Սովորական կապոյտ կտաւ, այլ ներկ մը շըկայ:


Խօսելով մարդ յօգնում է, անգամ թէ չի լինի.  
Լաւ է վերջ տալ, դիտել ապագան ի՞նչ կը լինի.  
Թոնդ մտածեն, չգործելով ոչինչ չի լինի.  
Խնամելով, խելօքութեամբ արդիւնք կըլինի:

Պարզ օրինակ է, միութեան մէջ տոնն կը շինուի,  
Թէ ուղում ես ծառ պատուաստես, պտուզ կը լինի

Ամէն անսմիտ գործը աւերակի կընմանի.  
Միութիւնը մշտական յաղթութիւն կը տանի:

Բակարատիս վերայ դիտեցէր ի՞նչ եմ ասում.  
Թէ սխալ եմ, ներում, լուծում ձեզնից եմ խնդրում.  
Ով հասկանայ, նորա սրտից աղբիւր է բղխում  
Իմ կաթիլ ջուրս անգամ ցամքել է ինձանում:

## 24-Ն Մայիսի



Ե Ր Ե Խ Տ Ե Գ Է Ց

Սիրելի երախտագէտ և ճշմարիտ,  
Քո խելքով դու համոզուիր ու տանջուիր,  
Գործ արա, խրատ խօսիր քո պահանջիկ  
Մեծ է նստուած և ուղղասէր դու դիտցիր:

Քո կեանքը անցաւոր է, շուտ ես գնում,  
Հանգստութեամբ և անվնաս ես ապրում.  
Գանձ մի ցանկար, միջակ ապրուստ անցեալում  
Հեռուից դու լաւ դիտէ ինչ են շինում:

Վատերն իւրեանց փողից չեն օգտում,  
Զըկելով հաւարում են, վերջն է նւմ,  
Զուր է բոլոր վատ ջանքեր միշտ են կորչում  
Բարի անուն երախտիք չեն մոռացում:

Լաւ անունը եկեղեցին է յիշում  
Վաշխառուն, բոլոր մարդիկն են ատում,  
Ով երախտագէտ, նա ոմնի զգացում  
Ով ուրացող, հոգու աշքը փակ դռնսւմ:

Հիմա ընտրէ թէ որ սիրում ես պատիւ,  
Չը սխալիս, մեկաց մէջ կըկորիս անժիւ  
Հոգիս, մի օր լաւ, մի օր վատ, կ'անցնի,  
Փառասիրութեանը դու մի սխալի:

Բագարատ, դու անօդնական մնացիր,  
Խօսքերդ աղիւսի վրայ զրեցիր,  
Հեղեղն եկաւ, առաւ տարաւ դու նայիր,  
Երախտիքը մետաղի վերայ չի գրուիր:

Ե Ր Ե Խ Տ Ե Գ Է Ց

Մարդկանց մէջ գտնւում են երախտամոռ անձինք  
Հին ժամանակներում կային բայց խմբեր փոքրիկ,  
Ներկայիս քիչ են ճարւում երախտագէտք ճշմարիտք  
Մեծ զարմանք է, ինչ շատ է վատացել այս տարիք:

Անպիտան փոքր խումբը այժմս դեր է խաղում  
Պայծառօրէն իւր գոյնով փայլեցնում, որսում  
Ճկում է հզօրը, փթեցնում է ժանդը  
Լափելով թշուառին, ապշում է ճշմարիտը:

Հարուածելով յետ չէ կանգնում այս բարբարոսը  
Խեղճ զոհերից միշտ որսում է ուժեղ առիւծը  
Հզօրը նոյն տեսակ արծիւը թռչունները  
Ահա հոսանքին միշտ զոհ են գնում խեղճ մարդիկը:

Եյս տեսակ մարդկանց գործն է որոնել այսպէս  
Սսելով դարը ոսկի է, ուրացիր լաւ տես  
Թէ որ օգտուիլ դու դիտես, ճիշտ իմաստուն ես  
Զգուշացիր, կ'ասեմ, երախտագէտ շըլինիս:

Ո՛չ խիղճ և ոչ դատաստան կը հաշուին ներկայիս  
Ով ինչ կողոպտեց սա էլ ինձ Աստուած դու ներես.  
Եթէ քննես սրան, ամենայն վարքը տես  
Լայնութիւնը և երկարութիւնը մի չափես:

Անդգամութիւն, երախտամոռութիւն մին ա  
Ապահովթիւն, շարութիւն հիմա կընթանալ

Այժմեան լուսաւոր դարը վատ պտուղներ կըտայ  
ձանապարհը մեծ զնացողը յետ չի դառնայ:

Մենք մեր ձեռքերով կորստեան գուռը կը բանանք  
չաւատարմութիւնը սակաւ, ինչու նմանակ  
չացը պակաս, գործը պակաս, ուսում չունեցանք,  
Վատ ընթացք է, յետ զնալով՝ բաղցած կըմնանք:

Բագարատ, բաւական է ուրիշին խրատես,  
Ինքդ գիտես, որ միշտ ուրիշից կըպահնաջես,  
Յնողըներ են ամբողջ աշխարհի հետ կըմրցես  
Լաւ կըլինի, ինչ որ գիտես, քեզ խաղաղ պահես:

26-ի Մայիսի:



### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԸՐԴԿԵՆՑ ՀԻՒԵՆԳԵՆՈՅՑԸ

Այս հիւանդանոցի պատկերը հետաքրքիր է,  
Հետեւել է պէտք, թէ ինչքան լաւ լուսանկար է,  
Ով հանդիպի, կը ցանկանայ իրան ևս նկարէ  
Համապատասխան զին է, ով ուզում է նա վնարէ:

Ճուրջը նայելով ուրախ-ուրախ նկարում է սա  
Կարճ միջոցում տեսնում է իւր պատկերը նկարուած ա  
Բաւական է, որ տկարների շարքն անցաւ սա,  
Այլ չի առողջանայ, ինչքան որ բժիշկը գեղ տայ:

Մնհամար տկարներն ինչքան պէտք է տանջուին  
Մինչի որ անօգնութեամբ մահուան օրերը հասնին  
Հիւանդանոցին մի գուռ կայ, թէ բոլորը մտնին  
Ջատերը կիս-առողջանալ ցաւօք կը մեռնին:

Ոմանք իւրեանց տներում այս այն կողմը կըտքնին  
Տկարները միմեանցից տարբեր ցաւեր ունին  
Բժիշկներ հաւասար չափով բոլորին հսկում էին  
Լաւցնելու տեղ ցաւերը կը շատացնէին:

Այս վարակիչ հիւանդանութիւնը բոլորիս մէջ կայ.  
Բժիշկ, բժշկեա զանձն քո, օվնեա առողջանայ  
Լուսանկար վարպետը հեռուից մտիկ կուտայ  
Ի՞նչ եմ նկարել, ի՞նչ եմ տեսնում, գոյն գոյն է սա:

Այդ ցաւերով թնդան մնան, մի օր կ'առողջանան,  
Կամ թէ սորանը ընդհանուրով պէտք է ոչնչանան.

Այս լսելով բժիշկները պաշտօններից յոզնեցին  
չեռացան որպէսզի իւրեանց կեանքը փրկէին:

Տկարներն տեսնելով որ բժշկողներ չ'կան  
Այնքան գեղ էին ընդունած, որ իրանք ալ փշացան.  
Չըկարողացան առողջանալ հոգիարք ընկան  
Ահա սոսկալի հրովարտակը վերջի օրուան:

Հիմա հանգիստ ննջեցէք, սպասէք մինչև գալստեան  
Յաւոց փարատութիւն կըլինի վճիռ դատաստան.  
Այդպէս խաղաղ հանգչիք, ինչու էիք չարշարւում դուք  
Ինչքան խեղճ տկարի դայրացրիք, կողովտեցիք դուք:

Բագարատս նոյնոլէս տկարների շարքումն եմ  
Չարշարւելով, տանջուելով միշտ այդպէս ապրում եմ  
Զուր չարշարանք, անօգուտ վաստակի կ'սպասեմ  
Հիւանդանոցի կարգը շը փոխուեց, լաւ է մեռնեմ:



### ԺԵՄԵՆԵԿԻ ՀԵՄԵՄԵՏ

Առանց դատելու խօսիք, անպէտք, ճարտար ձեացիք  
Տկարների մօտ քո խօսքերով գիտնական եղիք  
Լաւ դրուածք թէ մաքումդ կայ, խօսող կոկիկ եղիք  
Հասարակ դասի մէջ դու քեզ հասկացող անուանիք:

Միշտ մեծ խմբի կողմը ճկիք, ծածուկ գործդ գիտցիք,  
Ստէ, ուղղութիւն, գաղտնիքովդ արդար դու եղիք.  
Քաջ մարդկանց մօտ փոքրացիք, մկան նման սուր եղիք  
Թէ շրինի բեղանից բարձր մարդ, շարացիք:

Վայել է ժամանակիս այդպէս վարուիս, ձեանաս,  
Թէ որ տանջեց քո խիզճը, համրացիք, կարծը եղիք  
Բերանդ փակ պահիք, անմեղ աղաւնի ձեանաս  
Լոկ խօսքերով մարդասէք, փողի սիրուն ազգ ծախիք:

Առ երեսս խնայող, ինքդ խորամանկ օձ եղիք  
Կեղծաւոր միտք ունեցիք, իմաստնազէտ անուանուես,  
Այս կերպ վարմունք թէ ունիս, միշտ փող կըվաստակիս.  
Դատի գնալիս, Տէր ուրաց, վարձական վկայ ճարիք:

Քընձքնձ աղուէսի նման խեղճի պանիքը գողացիք  
Կաքաւարայլ շարժումովդ նենգ սրտումդ դու պահիք.  
Համեստ հարսնացու ձեացիք, որոգայթդ լարիք,  
Վերարկուդ մողնի արա, գլխովդ դատարկ եղիք:

Փափուկ բնութիւն ունեցիք, կեղծ դիմակով ծածկուիք.  
Մեծ հիւանդանոց վեր արի, գրանդ դատարկ պահիք,

Վաճառատունդ դատարկ, մեծ անուանագիր ունեցիր.  
Այս ձեերով կարգ պահէ, մի օր խոկոյն կոտը ընկիր:

Եյս տեսակով կը հարստանաս, ի՞նչ փարթամ կ'ապրես,  
Վարուար այդպէս քո խելքովդ, շատերին կը բանդես  
Ի՞նչ ես ձգտուամ, որպէս զի շրեղ ապրուստ ճքիս.  
Բագարատիս թէ հանդիպար, մի լաւ ապտակ կ'ուտես:

26-ն Մայիսի



Մի կինք ԴԱՌԱՋ ՕՐԻԱՐԴ

Ո՞վ գեղեցիկ օրիորդ, հազուագիւտ տեսրովդ  
Ե՞ի գոռովանար, որ քեզ նման քիչ են գանւում,  
Ծածկուած ես այլ քողով, աներեղիթ գունովդ  
Բացուիր կարգամ այն տառերը, ինչ որ կայ քո սրտում:

Երտարինով չը վստահիս գոռովաբար շարժիս  
Դորա հետ ալ խելք ալ պէտք է վիհ մայրի նմանիս,  
Գիտցի ազնւութիւն, համեստութիւն թէ որ ունիս  
Սպա յարգիմ, գովասանեմ պատուի արժան քոյր ես:

Եյնուհետեւ բախտի անդամ համապատասխան ես  
Պատուի արժան իսկ ընկեր ես մարգկութեան մէջ փայլիս,  
Լուրջ ընթացիր քո վիճակով յարմար ընկեր ընտրես  
Թէ պատահաւ իսկ ընկեր, սիրտդ նրան նուիրես:

Սուրբ պայմանով հաստատեցէք, սիրով գուք ապրեցէք,  
Բարի ծնողք, բարի զաւակ գուք փայլուն աւետէք,  
Ճաճանչներովդ շրջէք, աշխարհին բոյս չնորհէք,  
Հազուագիւտ էք նշանաւոր իսկութեան վայելէք:

Խոր ծերանաք պտուղներով և բարի անունով,  
Եյս կենցաղին ունայնութեանը չընաւատաք  
Կեանը կարճ է, անմահ անուն, բարի խրատ կուտաք  
Վերջ ի վերջոյ կը հեռանաք, ետքից պայծառ լոյս տալով:

Բագարատս իմ բառերով խրատները կը խօսիմ  
Արթուն մնամ, ինձ պահպանեմ այլոց կը խրատեմ  
Քննեցէք թէ մաքուր չեմ, գուք այսպէս կը խօսիմ  
Հարկաւոր է պատուէք պահեմ, յետոյ մատուցանեմ:

27-ն Մայիսի

Ս Ի Ւ Ե Լ Ա Յ Ա

Տաղանդաւոր գիտնական փայլ է ըստ չնորհիւ  
Մատուցիլ, առաջնորդիլ, եղիր բարի հովիւ.  
Միշտ ուղղեա, բարոզեա ամեն տեղ քեզ է պատիւ  
Զանքեր գործ դիր, քրտինք թափիր ինքդ, սիրէ լոյս:

Քաջ առաջնորդ և զեկալար պաշտօնդ է մեծ  
Անձդ առնես նեղութեանդ մէջ մխիթարուեն.  
Ընդունեալ ես վրդովում ես, կուրծքդ կրծում է ցեց,  
Աշխատասէր ճիշտ հրեշտակ տանջուիր, սիրէ լոյս:

Հազուագիւտ ես՝ ի մէջ մարդկանց փայլուն արեգակ  
Դու տաքացուր, մրգեր հասուր անուշիկ էակ  
Ամպի նման որոտայ, կաթիներ թող արագ,  
Բուսնին ծառներ և պտուղներ ծաղլին, սիրէ լոյս:

Մշակածդ արդիւնքով քեզ կըլարձատրեն  
Յիծայ լոյսը, վանէ մութը, այդ կըբովարեն  
Անման հոտեր երբ որ բուրէր պարտէզի մասէն  
Եւ սիրտ ծաղկիր գործ կատարեալ տեսնենք, սիրէ լոյս:

Հատ աշխատար, քիչ յոգնեցիր միայնակ դու ես  
Միշտ աշխարհի վառ լավտերն ես, չըպէտքէ մարուիս  
Լուսաւորիր ըստ կրակով շքեզ ճրագ ես  
Քեզ ինդրողին մի խնայէ, ինքդ սիրէ լոյս:

Ո՞վ Բագարան, այդ լուսատու լապտերից վառէ,  
Դէհ, շտապիր որ բաժանում են թէ պէտք է  
Աւաղ, ինձ էլ երբ պէտք է տան, ինքս կ'սպասէ  
Ես չեմ տեսնի, մութ խաւարով եմ պատ, սիրեմ լոյս:

Լ Ա Յ Ա Ը Ն Խ Ե Ր Հ

Հողային գնդի բոյսն անթիւ ու անհամար  
Ճատ տեղ պայծառ, շատ խաւար, մութ ամսլ կար  
Կային պարտէզը և անչափ պտուղը միրգ դալար  
Մշակուած է փայլուն կերպով, մեղանում—ոչինչ:

Էշարածը իշխող եղաւ հանգամանքից  
Վճիւ տուեց հորթարածը սրտի խորքից  
Ներկայ եղած անգամները են յուշարար  
Կնիքը ձեռքում երբ կերտում էր խաչնարած:

Գնդի լոյսից ինչ օգուտ մեզ մշուշը պատած  
Լապտերներից մի նոր լոյսմ չըկայ վառած.  
Մութ խաւարը պինդ մեղանում միշտ են պատած.  
Խաժամուժ ամբոխ ենք մեղանում ինչ—ոչինչ:

Լոյսի գունդը տեղ լուսաւոր, տեղ մութն է  
Վառ արեգակ, մաս մը չերմ է, մաս սառուց է  
Մեր երկիրը բնութիւնից է պատժուած  
Աշեր կապած, ձեռքեր և սաք շղթայած:

Խեղճ ժողովուրդը, կոյրի նման գցում փակուած.  
Մեզ բժիշկներ թէ այցելեն առողջ կանգնած  
Ե՞րբ բժշկեն բոլոր հմից անմեղ մարդկանց  
Աւաղ աշխարհ, ինչ ունիս մեղանում,—ոչինչ:

Իմ կարծիքով փոսի մէջ է մեր երկիրը  
Երբէք լոյսի ճաճաշները չեն այցելում

Դորս համար քայլայուել է մեր աշխարհը  
Ասա, խնդրեմ, նոր հասկացայ ինչ ենք փնտրում:

Վայ մեզ, օտարները լոյսի մէջ են ապսում  
Ինչ որ լինի մենք պէտք է այսպէս մնանք  
Վոյ ժողովէր, թէ փողով է շուտ ստանանք.  
Գնենք լոյսից, փախչենք մութից, սա էլ ոչինչ:

Բագարատ, փակ աշերով չի տեսնուի լոյս  
Զրկուած ենք, կրգայ մի օր կըտեսնենք լոյս,  
Ամեն տեղ լոյս կայ, բայց չենք տեսնի, չկայ լոյս.  
Խաւար պատած անկիրթ մնանք, մու է մեզ լոյս:

29-ն Մայիսի:



### Սկիզբ եկ վերջ

Աւազ անցնում է կեանքի թիւ և օրեր  
Հասակ կորստեան անցնում է մանկական օրեր  
Գնում են տարիք չեն հեռանում խոր վերքեր  
Ցաւեր գալիս, կեանք վրդովում փոթորիկներ:

Մատաղ հասակում կարմիր վարդի պէս էի բուրում  
Ամեն մարդ սիրում, մրգեր էին նուիրում  
Հիմա անցեալն եմ լիշում, սիրտ է տրոփում  
Ել ձեռ չի անցնիլ, տիսուր օրեր է լսում:

Հոգսերով ծանրաբեռնուած ծերութեան շեմրում  
Ալկորեցայ ոյժասպառ եղայ վերջում  
Դործից հեռացայ, մահին էի սպասում  
Եյդ անիրաւը դարձեալ ինձ չէ հանդիպում:

Մարդուս ընդհանուր կեանքի գոյութիւնն է  
Միւնոյն, ինչպէս մի օր լոյս և մութ է  
Բոլոր վաստակն չորս չափ կտաւ հագուստ է  
Կարգով մեռնելն, սա օրինաց մահ է:

Բագարատ, ահիւ կաց, երկիւղիւ կաց ինքդ  
Ազգի առաջ օրինակներ կան, բեր միտղ  
Թէ չես խոնարհում, նա տանում է իւր կարգում  
Զարհուրելի մահ, զոռուն հրեշտակ հնչում:

29-ն Մայիսի



### ԵՆԻՆՆԸՄ ԵՐԿԻՒՐ ԵՒ ԳՐՈՒԹԻՒՆ

Եւոպայում ամենայն գործ ընդարձակ  
Գիտութիւնը նրանցում պարզ—համարձակ,  
Ընիւները ֆռուում են արագ—արագ  
Իսկ մեղանում միութիւնը ընդհակառակ:

Արտասահմանումը ազբի պէտք ունին,  
Զատ պահում են, բոյսի համար ծախում են  
Իսկ մեղանում որպէս անպէտք կըթափեն  
Որտեղ մնաց միւս գործերը յետ են:

Խորը քնած չնշում ենք որպէս մարդմ ենք,  
Կանցնին տարիք, կրգան օրեր կըդարթնինք  
Բայց ինչ օգուտ կովիտութեամբ կըվարուինք  
Օգնութիւն, սէր, միութիւն կազմենք, կազմենք:

Մշակենք երկիրը, մենք հանքեր շատ ունենք  
Հոգում ծածկուած, իւր ծոցում իսկ կեցած  
Հայցել ես որոնող, բանգելով դու բաց,  
Չի աջողուի կարծեմ, երկիրն է պատժուած:

Մեր հոգերը թէ որ Եւրոպա լինէր  
Մի բուռն անխնամ երբէք չեն թողներ,  
Մեղանում կարծես ամեն բան թմրեր էր  
Բնութիւնն աշխարհ պակաս չէ թողեր:

Լուսաւորները հեռուից կըդիտեն  
Մեր երկիրը և մեղ նրանք լու գիտեն

Սովորական վայրենի կ'անուանեն  
Աւազ այս պատկառանք միշտ մեղանում են:

Բաւական է, շրմեռանք, փթում ենք, օֆ,  
Հանքերը հոգում, մարդիկը օգում օֆ,  
Բոյսը տեղում, ծառը պտաւը, օֆ,  
Քաղաքակիրթը, գիւղացին նոյնպէս, օֆ:

Տանկ-տնագ պէտք չէ, ճիշտ իրար նման-վայ,  
Ճըշնիք բթութեամբ, ապրինիք կոպտութեամբ, վայ,  
Քնիք, քնիք գեղեցիկ Ասիա, վայ,  
Մի օր դու օտարի ձեռքում զարթնի վայ:

Տէրը չօգտուի, օտարը եկան, վախ,  
Ի՞նչ մոլութիւն, ի՞նչ մութ խաւար, աւազ,  
Անմիաբանութիւն ամուր զրկել ես ձախ  
Պարսպով պատած, դուռն է փակ, աւազ:

Բանալիք չըկայ, շուտ բանային, ափսոս,  
Արհեստ է հարկաւոր, զոցը բացուի, ափսոս,  
Վարպետներ են պէտք, որ հասկանան, ափսոս,  
Դա էլ մեղ չըկայ, նրախց ճարենք, ափսոս...

31-ն Մայիսի:



ԼԵՒ ՈՒ ՎԵՏ ԹՐԵՅՑԻ

Լաւ զրացի, յաւիտեան կացի,  
Խոլ եղբայր-քոյր, տանը մօտի,  
Պատահում են նեղ օրերի  
Վերաբերսւին հայր և որդի:

Վատ զրացի, քոչդ բարձիր,  
Արագ-արագ շուտ հեռացիր.  
Ուր որ գնաս, ձանձրացնես,  
Մի շարաթում զզուեցնես:

Քուռ-կից անուն և այդ բառը  
Կանանչ է միշտ ջրի ծառը  
Երկար ապրէք, պատուվ վարուէք,  
Միմեանցով ուրախացէք:

Վատ զրացի, ուր գնացիր  
Զգոյշ եղիր, պատուվ կեցիր.  
Դու խրատուիր, խօսքդ զիացիր  
Քո բերանում սանձդ պահիր:

Ժամանակով քոյր-եղբայր էք,  
Սուրբ Փրկչի խօսքը պահէք,  
Ով մարդասէք նորան հաճէք,  
Ատելութիւն հեռացըէք:

Գոռող կարողանաս ապրել  
Քաղցած փորիդ ապրուստ ճարել

Քո ձագերով պատսպարուել  
Հար լեզուիցդ ես պատժուել.

Առաւօտեան արշալոյսին  
Վեր կենալիս, գոներ բացուին,  
Բարի լուրով աւետեցին,  
Ողջոյն տուին, ողջոյն առին:

Բագարատ, սիրով զրացին  
Լաւ բարեկամ կը հաշուին.  
Հայն կըտային տարաժամին  
Ուրախ-ուրախ կըխօսէին:

31-ն Մայիսի:



## ՀԵՐԻ ՈՒ ՓԵՌԻԲ ԸՆԹԱՅԺ

Մեղանում աշխոյժ բառը մենած է  
Վառ եռանդը երակիներում մարած է.  
Երկիրը որպէս թակարդ պաշարում է  
Ծանր թակիչ, ջարգում, փշրում, ալրում է:

Դիլքը մեծ չէ, որ ճոխանայ ու զործէ  
Ինչպէս ձուկը մեծ զսերում աճում է  
Մարդ ես նոյնպէս քո բազուկներ արձակես  
Առաջ խաղաս, մանր քայլով միշտ զործես:

Այնժամ փայլի յատկութիւնը իսկ լաւի,  
Ճնար չըկայ որպէս կապանք արձակուի.  
Ամուր շղթան օղակներով է կապուած.  
Երբէք չէ մաշւում, կապերով է ամրացած:

Տարիս լրացաւ, քսան և մէկ եղաւ,  
Ուժերս հաւաքուած, մարմնուս մէջ բռնկան  
Կայծեր թափուեցան, պէծեր արձակուան,  
Սպստիկ էր որոտում, սիրտս ալեկոծուած:

Հոգիս տոշորուած, արձակուել էր ուզում,  
Ոյժերն իմ առոյգ իղձեր կատարուս  
Յոյսերս անժիւ իմ մէջ պարունակում,  
Քանի տիրում եմ մտամոլ մտքում:


Ինչպէս հերոսը պատերազմի դաշտում,  
Ուժեղ բազուկով թշնամուն հալածում,

Նոյնպէս նեղ երկրում հայեացը եմ ձգում  
Անգործ մնան ինձի չէ վայելում:

Մակայն եթէ վիճակուած էր, բախտ ունիմ,  
Սրտատրոփի և անհամբեր կ'սպասեմ  
Պինդ կապանաց արձակումը երբ լսեմ,  
Միրտ իմ ցնծա, ազատ օդում ես գործեմ:

Բազարատս խաղաղ պահէ իւր կրքեր,  
Գործն փայլի, առաջ զնան իմ յոյսեր,  
Ինձ համաձայն հոգի և շունչ ներչնչէր  
Բոլոր կամքս բարի զործին նուիրուէր:

1-ն Յունիսի:



Հ Ե Մ Ե Ս Ա Բ Ն

Ո՞վ գու համեստ և բարեպաշտ տիկին,  
Ընկերութեան անդամ, անկեղծ բնիկը  
Հանդիպած օրից լսեցի լուրեր  
Քո բարի անունդ ինձ ծանուցին:

Բախտն աջողուեց, Աստուած կամեցաւ  
Սիրոյ սէրը սուրբ կապով միացաւ  
Ո՞վ յարգելի կին իմ, արի, կեցիր,  
Սուր հայեացքով տունն մեր պաշտպանիր:

Հանգիստ եղիր, իմ պատուական ընկեր  
Ես եմ տանը պահապան-հրեշտակ,  
Մայր է պէտք որդոց համար դաստիարակ,  
Արարիշը մեզ բախտ է կամեցել:

Կին հարազատ և բարի ինքս եւ,  
Հմուտ գործի ընտանեկան ես եմ,  
Միշտ մաքրասէր պաշտպանելու պարագ եմ  
Եւ խնայող հաշուով կը պահանջեմ:

Մի վրդովուիր, որդուս մայր կը ինիմ,  
Լաւ կը պահեմ ու դաստիարակեմ  
Ուսուցիչ եմ, մեծ պաշտօն կատարեմ  
Իմ որդուն հոգի և կեանք նուիրեմ:

Բարի խօսքով որդուս սիրտը լցնեմ,  
Եեծացնեմ սիրով սրտիս մայր եմ,

Ծնող գթասէր, որդին բախտ ունէր,  
Ծառն իւր պտղէն բարիք կ'սպասէր:

Լուրջ նայում եմ ու լսում սուր խօսքեր  
Ո՞վ ամուսին, զու գեղեցիկ տիկին,  
Ճառեր խօսար, ծաղկեցրիր իմ հոգին  
Յանկարծ կեանքիս որվէս բժիշկ գեղ տուիր:

Յոյս ունեցիր նոյնպէս ինքս եմ արի,  
Գու իգական ես արական գործի,  
Մի սիրտ և մի հոգի ծաղկուն փայլի,  
Միրով խորհինք, հանգիստ եմ գէպի քեղ:

Թնդ գան վնան այս օրերն ուրախ,  
Կարճ կենցազում սիրոյ կապը տեսնենք,  
Խոր ծերութիւն բարի մահին զիմենք  
Օրինակն է բարի փայլ է անվախ:

Ո՞վ Բագարատ, անհատ են այսպիսիք  
Աղաշում եմ գուք անփորձանք լինիք  
Վարդ մանուշակ երբէք չը թառամիք,  
Սոխակ ծիծեռնակ ձայներով խօսիք:

2-ն Յունիսի:



Մ Ի Ա Խ Թ Ե Ը Ն Կ Ո Զ Ա Խ Մ

Ինչու գու ամին ժամ միութիւն կըխօսիս.  
Տանջում ես քեզ, այրում ես, միթէ յոպնում չես,  
Այդ պահանջին գեռ սովոր չեն, զուր կը խօսիս,  
Այդպէս հարցեր երբ չեն կատարւում, ափսոս ես:

Լաւ ես խօսում, աշխատաէր պատանի,  
Ժամանակի է կարօտ, որ կարգի ընկնի,  
Կանցնեն տարիք, վաղ թէ ուշ կըկատարուի,  
Այդ շատ ուղիղ է, ինչու հիմա չի լինի:

Որովհետեւ գեռ մեղանում ընդունուած չէ,  
Կրթութիւնը գեր չի խաղում, մեծ պատճառ է.  
Մի բան էլ կայ, որ ցերեկով լապտեր վառէ  
Այդ ինդրիդ վերաբերմամբ ճիշտ նման է:

Ո՞վ Բագարատ, բաւական է գու տանջես քեզ,  
Երանէ օդնող, թելագրող լինէր քեզ,  
Ի՞նչ անես միայնակ, շրջապատդ դատարկ  
Ասիայում մինոյն է հաստ ու բարակ:

3-ն Յունիսի



Բ Ե Ն Ե Ս Տ Ե Գ Ժ Ի Ն Կ Ը Ն Ա Խ Մ

Մարդկանց մէջ սովորութիւն է զործակցին ծաղրել,  
Հարստահարել, անպատուել դռները միշտ փակել  
Մարակել, լինասել, հեռուից կանգնել և նայել.  
Սպասում են մինչ վերջին շունչը գեռ չէ աւանդել:

Նոյն օրինակն է պատկերացնում ներկայիս  
Բանաստեղծ մի ոմն իբրև թէ շատացել են  
Մեր մէջ զործակիցներ առաջ են եկել այս տարիս,  
Ինչու էր ակնարկում երգիշ թող աշխատեն տրնին:

Այս խօսքերով կըվնասես մարդկային աշխոյժին,  
Փու վեր առ լաւ օրինակ լուսաւոր Եւրոպային  
Ազատ են թողնում, մինչ որ կատարելագործուին  
Տեսնում են թէ ինչպէս զործ ունին առաջ գնում են:

Իսկ մեղանում միշտ ընդհակառակն են խօսում,  
Սկսելով ծաղրել և նետահարել, փշրտել  
Չէ որ նա աշակերտ է, հարկաւոր է խրատել,  
Յոյս տալ, մի գուցէ նորա մէջ լաւ տաղանդ կայ:

Եկէր վերջ տանը, ձեռք ձեռքի տանը, մի բայլով ընթանանը  
Վենք եղբայր ենք, հին պապերուց մնացած թոռներ ենք,  
Եւրոպայում առաջ է գնում սիրոյ դրոշակ.  
Ճիշտ Ասիայում նոյն իսկ մեղանում ընդհակառակ:

Բագարատ, լուռ կացիր, շատ ես խօսում այս տարի  
Վոռացել ես մանկութիւնդ, մի լաւ յետ նայիր,  
Փորձուած ես հեռատես, քեզ ու քեզ թէ ուզես,  
Դատաւոր չես, ուսում շունիս, ինչեր կըպահանջես:

4-ն Յունիսի:



ԵՆԳԻԵՄ ԿԻՆ ԵՒ ԲԵՐԻ ԵՅԹ

—Ահա ամուսին ճարեցի ես յաւիտեան,  
Ո՞վ է ինձ նման, ընկերն պէտքական  
Իմ կարծիքով ինոչ պարտքն է պահանջ է:  
Ինդրեմ բերես աղ, մազ ինչ որ յետոյ պէտք է:

—Պայ ինձ, ի՞նչ շատ պէտքեր ունինք, բեր ուրեմն  
Քիտես, որ ամուսին, ինչ որ պահանջում եմ  
Բոլորը շուտ պէտք է բերես տան պիտոյքն  
Ժլատութիւնը պակասութիւն է ատում եմ:

Ահա, նոր կեանք, ուշ դարձրի քո պահանջն  
Նորեկ ընկեր ի՞նչ շատ պահանջներ ես ունեցել  
Պարզ ապացոյց են, ոյժերս պէտք է յոպնին  
Պարձ միջոցի այդ պահանջներից պէտք է շեղուել:

Ո՞վ անխղճմտանք, գու իմ միտքս փոխեցիր,  
Ընթացրդ վատ է, քեզ զսպիլ, զգուշացիր.  
Քո շափու ճանաշիր, բերնիդ սանձը քաշիր.  
Միշտ պահանջում ես, ինչ որ բերեմ, գոհ եղիր:

—Այդ ի՞նչ ես խօսում, գեռ սակաւ կըպահանջեմ  
Ամուսնութիւնը գու կարծում ես հեշտ գործ է,  
Մողնի կտորներ է պէտք որ ինձ շոր կարեմ,  
Չեպիս ամահովանի, մի զոյկ կոշիկ շունեմ:

—Նկատում եմ, իմ ամուսին, գու կըզգուես  
Ընկորձ ես և յուսահատ, իսկ ամուսին չես,  
Ո՞վ է մեղաւոր, զո՞ւ պէտք է կառավարես,  
Հեար շունիս, սուրբ օրէնք է, կրօնի ծէս:

—Ազատ ժամ չըթողիր, ինձ միշտ կը վրդովես,  
Բաւական է, վերջ տուր գործիդ, շատ կըխօսիս,  
Սիրտ կոտրելով, բարելով ի՞նչ կ'օգտառիս,  
Ցոյցից երեսում է գուռս պէտք է փակես:

—Միթէ ամուսնական կեանքն այս տեսակ է,  
Անտանելի է, անբժշկելի ցաւ է,  
Կարձ միջոցում զգուեցրեց, մտքից հանեց  
Կաքաւաքայլ ընթացրով, սոխակի պէս երգեց:

—Ի՞նչ ես վախենում, գեռ փողերդ ծախսած չես  
Յայտնի է սաստիկ ժլատ և փողապաշտ ես.  
Կարծում ես մահուան ժամանակ հետգ տանես,  
Ի՞սկ հայ հարուստ, կրեսսի նմանում ես:

—«Խօսելով ինձ մաշեցիր, տանջեցի, վերջ դիր,  
Քանձերիդ եմ գիլչում, գու քեզ մի վրդովիր  
Զեմ ուզում ես համբերել, մի լաւ կեանք չ'ունեմ  
Լաւ է որ ես ազատ լինիմ, ցաւ չըքաշեմ»:

—Վշտացրիր ինձ, սեղանակից անպիտան,  
Քընքնձիկ աղուէս, խորամանկ օձ, նենդական,  
Ալժոռակից վիշապ, աւերիչ, բայրայիշ  
Մարդակերպ պատկեր, ինքդ զգեստաւորիչ:

Բագարատ, այսպիսիր միշտ փշացնում են,  
«Կաթիլ ի տան իւրոյ» հեղեղի նման են  
Ալրը քանդում է իւր ձեռով տանը մի մասը,  
Վատ կինն անխիղճ կերպով քանդում է բոլորն:  
4-ն Յունիսի:



ՄԵՐԴՈՒ ԳՈՅՈՒԹԻՒՆԸ

Երեխան մօր արգանդի մէջ երբ լրանում է,  
Որպէս ճանապարհորդ շարժելով ուզում է,  
Բնակութիւնը փոխելով դէպի լոյս մեկնում է,  
«Ընկայ» աշխարհ ձայն տալով նա իմացնում է:

Ճնած աւուրից ծնողքը ուրախանում են  
Մեծ աւետարուր լսելով՝ իբրև օգտուեն,  
Միայն ուրախանալ չէ հարկաւոր որոշել,  
Այլ ապագայի համար մտածել գուշակել:

Ո՞վ գիտէ, վնասող անձ կարող է լինել սա.  
Տրտմիլ, սպալ, ողբալ, աշխարհին վնաս կուտայ,  
Ուրեմն այս ցափ տան մէջ բժշկող թէ կայ,  
Պարտք է ծնողաց ծնել զիտնալ հոգսեր կայ:

Մեծացնել, պատուաստել սորան լաւ բնութեամբ  
Կրթել, խրատել ամենայն հոգատարութեամբ  
Սպատել պարտք է, ինչպէս ազատում են, մեղք է,  
Դլուխ քո արիւն քո, բաւեալ է մեղք է քումմէ:

Աւուրն իմ կորստեան ծնան ինձ մեղաց որդի,  
Չը զսպելով ինձ, Արարիչն իմ բարկացուցի,  
Յաւօք ծնայ, տկարացայ, ևս շրժշկուայ,  
Անհոգ մեծացայ որպէս փոքր մարդ պատկերացայ:

Երեխան բնութեան կանոնով մեծանում էր,  
Բայց ինչ պէտք անձամբ մեծանալուց, ոչինչ չունէր.


Ոչ բնական և ոչ ստացական կըտիրէր,  
Միայն հազնել, զուգուել զրօսանիք կըսպահանջէր:

Ի՞նչ զսիութիւն թէ իր և թէ ծնողաց համար  
Ոչինչ ոչինչ, նման շարժական արձանի,  
Չըպէտք է ուրախալ որդու համար,  
Մպասել է պէտք վերջին ինչ գոյութիւն ունի:

Իւրաքանչիւր մարդ սպասում է իր որդոցմէ,  
Բարիք վայելել, որպէս բարի պտուղներէ  
Աւազ, շատ անզամ հակառակ դառն լինում է,  
Մարդ ունի որդի վատ, միենոյն է, անզաւակ է:

Բագարան, միշտ լաւերն պէտքական որդիք են,  
Փայլուն մետաղի նման ոսկի անուն ունին,  
Մարգկանց թելատրող, առաջնորդող լինում են,  
Երանէ այն ծնողաց, որ բարի որդիք ունին:

4-ի Յունիսի:



### ԵՆՈՂԱՐՄ ՀՅՐՈՒՄ

Ո՞վ գու երևացող հարուստ հռչակաւոր ես,  
Անուանդ համաձայն գանձեր ինքդ շատ ունես,  
2ը լինի թէ հալարտանաս փողով զարմանաս,  
Փարթամանաս, բացուիս, վարդի նման շատանաս:

Աշխարհի սկզբից մինչ հիմա կանոն է դա  
Եյդ անիրաւը մի օր քո մօտը կը մնայ  
Յանկարծ տեսնում ես մի օտարի մօտ ման կը դայ,  
Ամեն հարստացող գիտէ գորան յոյս չը կայ:

Սիրէ ուսումնաբան, սիրէ լուսաւորութիւն,  
Եղիր եւրոպական ունեցիր ընկերութիւն  
Քեզ վայել է նախագահ լինել և վարչութիւն,  
Եղայլութիւն, միութիւն կեանքի փրկութիւն:

Ասածներս չես կատարէ գու ժլատ հարուստ,  
Դու ապահով ես, ինձ վերայ միտք չես ունենայ,  
Եթէ կրթութեան գու հետեւս, չունիս կորուստ,  
Քեզ չեմ մեղադրում, անհոգի ես, փողապահ:

Գիտցիր, որ քեզ չի մնայ, փողը հեռանում է,  
Երեսիդ նայէ հայելով գոյնդ միենոյն է,  
Ում համար ես զիզել, ինչու պէտք է ծառայ է.  
Քաջ յայտնի է վերջի օրդ միասին պէտք չէ:

Բագարատիս չը լսեցիր, քեզ ծերացրիր,  
Ահա մահ, դու քեզ պարզիր խորը քնիր,  
Լաւ չէր լինի բարի զործերով իսկ մեռնէիր,  
Ոչ ոքի չը շահեցիր, շուտով անհետացիր:

5-ն Յունիսի:

### ԴԹԲԵԽԸ ԹԻՉՈՒՆԻ

Բաղէ թռչունը ուղում էր մի տեղ որոնել  
Որոշեց նա տեղ ընակութիւնը հաստատել,  
2արաշար կրելով չոփեր շնում էր բունը  
Նստում էր ձուերին համրելով նա օրեր:

Աշխատասէր թռչունը մեծ նպատակ ունէր,  
Յետ չէր կանգնում շարունակ բերելով շնում էր,  
Հաղիւ կարողացաւ ձուից թռչուն պատրաստել  
Փոքրիկ բունի մէջ իւր ձագերով տեղաւորուել:

Անվերջ փշում էր ահոելի քամին իւր ուժով  
Խղճուկ թռչունը ձագերին գրկել էր թեերով.  
Որպէս զի աղատէր փորձանքից քամին չը տանէ,  
Զուր չի անցնում յոյսն ու ջանքը, մայրական սէր է:

Մէկը բերանով երկուսը ճանկով վեր առաւ,  
Փոխեց իւր տեղը ծանր թռիչքով հեռացաւ,  
Խղճուկ թռչունը ոգեհորութեամք տանում էր,  
Օղում շատ սաւառնեց, չը գիտէր ուր պէտք է մեկնէր:

Որոշեց ցած գալ ժայռի տակ հանգիստ թէ գտնէր,  
Թափառականը մինչև որ ապաստան ճարէր,  
Բնական սիրով բերեց կերակուր որպէս տէր,  
Քամուց աղատուեց իւր ձագիկներով ապրում էր:

Գոնեա մարգիկը սորանցից օրինակ առնեն,  
Նման անամնեաց իսկ նորանք էլ պարտական են,  
Ճատ անգամ մարդիկը ընդհակառակն կը վարուեն,  
Բագարատ, դու ես չ'անես, սաստիկ կ'ատեն:

6-ն Յունիսի:



Փ Ա Գ Ա Վ

Նախագահը մեծ կարիք ունէր,  
Ժողովի հրաւիրեց անդամներ,  
Կաղ քայլերով հաւաքուեցան ցովիեր,  
Ճատերը չը զիտեն ժողովի բառեր,  
Տեսքով մարդիկներ, ուզգութիւնն ուր էր:

Վերջապէս դահլիճում ուր բազմացան,  
Կարեռ գործի վճիռ պէտք է տան,  
Նախագահը կարդաց, թէ որ հասկանան,  
Վերջացուց կարդումը շուտ խառնուեցան,  
Ազմուկ տուր-գմբոց կըքեր եսական:

Կարգով, մէկդ խօսիք, միւսը լոէ,  
Բոլորդ խօսիք ով պէտք է լսէ,  
Կորաւ ժամանակը, վահ ի՞նչ ամբոխ է,  
Վիճելով այսքան, գործին չի օգնէ,  
Թողին հեռացան, օրը շաբաթ է:

Թէ որ կրկնուի գործը միենայն  
Կողմնապահ անձեր ճկում են արթուն,  
Վճիռն անարդար ժամանակի տուն,  
Ժողովածները չոփ ու ցախ բգուն,  
Տուին վճիռը իրանց սիրելուն:

Մէկին ընտրում են վարձական ձախով  
Ճաղկալ մարդիկն իրար սիրելով.

Դէհ, դու քուէ ձիդ, խօսքս լսելով,  
Մեր կողմն ընտրենք, ճիշտը ստելով,  
Միշտ նա պէտք է մեզ, իրար ստելով:

Ի՞նչ վճիռ է, ի՞նչ արդարութիւն է,  
Նման ժողովին, կարծես կանտոն է,  
Սկերես արդարութիւնը յետ է,  
Ով որ հարուստ է, նա մեծ անդամ է,  
Բազարատս հեռուից կը դիտէ:

7-ն Յունիսի:



Պէտք է Մեթնել

Բնութեան կանոն կատարիր,  
Պատանեկան կեանըդ պահիր,  
Ճողքը ցողէր, վարդ ես, բացուիր,  
Անուշահոտ գոյն վարվոէր:

Թէ որ զարթար ծաղիկ պայծառ,  
Քո ճակատին աստղեր է վառ,  
Իսկ կրծքումդ զրուած է ճառ,  
Նմանում ես մի անմեղ զառ:

Պէտք է մեռնել ճշմարտութեամբ  
Հուր աշերդ փայլունութեամբ  
Ծալք ուղեղդ իմաստութեամբ  
Լեզուդ ճարտար միշտ ուղղութեամբ:

Զուր է կեանըդ, պէտք է մեռնել,  
Եւ բարութեամբ մթից թռնել,  
Մարուր նիւթդ օգում ցնդել,  
Դոց սրտերն յանկարծ բացուել:

Յոյս ունեցիր, աշխատասէր,  
Լոյս լապտերը միշտ վառում էր,  
Ճշմարտութեան մեծ սինն էր,  
Ամուր կանգնած, հաստատուն էր:

Զի գու հովէ բազմամիտ ես,  
Սրտիդ խորքից գու խռով չես,

Քո քնարով անուշ երգես,  
Պէտք է մեռնիս, անուն թողնես:

Լոյսը քո միջով անց-կացաւ,  
Թափիր քրտինք, օրեր անցաւ  
Վէրքիդ գեղեր չը ճարուեցաւ,  
Անուշահոտ խոնկ ծխուեցաւ:

Ճուտ կը գնաս այս աշխարհից,  
Խնդրէ մի լոյս ուղիղ սրտից,  
Զրկուած ենք ուսման կէտից,  
Փարատուէինք սրբութիւնից:

Ուրախանալ չէ հարկաւոր,  
Գործ ունենալ նշանաւոր,  
Չը նմանել իսկ չնշաւոր,  
Խելքի կարօտ և չունեոր:

Լինի միշտ քո յիշատակդ  
Գիտցիր զու միշտ պապդ, մամդ,  
Դէմքդ տխուր, ինչ է ցաւդ  
Բարի անուն յիշատակդ:

Քանի որ հող պէտք է լինիս,  
Կեանկիդ հիմը ծուռ չը դնես,  
Անկարդ շարուես, շուտ կը բիս,  
Անհետանաս, կը խորտակուես:

Բարի գործեր երբ որ թողնես,  
Քո ուժովդ թէ որ օգնես,

Պատիւ, յարգանք միշտ վայելես,  
Իրաւացի որ բողոքես:

Յազարատ, անցիր, դարձիր, բեր,  
Բարի գործն ունի իսկ տէր,  
Վատը լաւին չը վնասէր,  
Սրտիդ կոկոմ վարդը բացուէր:

8-ն Յունիսի:



Պէջք է ԱՊԵԼ

Ապրիմ պէտք է այս աշխարհում,  
Ուր աշխատանք և իմ ձգտում,  
Վաստակներս եմ հայթայթում  
Մարմնոյս համար մի այլ թնդում:

Պէտք է ապրել, զուարձանալ,  
Բայց չափաւոր իսկ ընթանալ  
Փոքրութեամբ բաւականալ  
Եւ ընդարձակ սիրտ ունենալ:

Ինչպէս մարդս պահանջներով  
Ապրել է պէտք հասկանալով,  
Մթնով եկայ, գնամ լուսով  
Հնկղմում եմ փոքր ծովով:

Սիրել կեանիքս ուրախացած,  
Եւ ոչ այնպէս յոյսեր դիզած,  
Յանկարծ տեսայ ինձ թառամած,  
Որպէս զեփիւռ եկաւ, գնաց:

Յանկամ ապրել իմ կամքովս  
Օդում թռչել թերովս,  
Աւազ, զուր է չարշարանքս,  
Երբ մօտեցաւ իմ վախճանս:

Իմ յատկութիւն թէ չը ջոկեմ,  
Ոչ բանական, իսկ անբան եմ,

Անասնեաց պէս ես անմիտ չեմ,  
Նման տպին այլ ի՞նչ մարդ եմ:

Հազնեմ, ապրեմ, ուտեմ խմեմ,  
Ի՞նչ օգուտ, բարի գործ չ'ունեմ,  
Մահի ձեռքից ես ուր փախչեմ,  
Ուշ և շուտ, պէտք է աւանդեմ:

Ես խոնարհեմ իսկութեանը,  
Մահուան ժամում մտնեմ հողը,  
Հանգիստ նիշեմ զամբարանը,  
Սպասելով յարութեանը:

Բազարատ, վարդդ թառամած,  
Ինչպէս ծնած, նոյնպէս մեռած,  
Հարուստ աղքատ նոյնպէս զնաց,  
Հոգագունդն իւր տեղ մնաց:

8-ն Յունիսի:

Պ Պ Յ Ա Ւ Է

Սուրբ տեհնչերով լոկ ծարաւած,  
Աղբիւր չըկայ ինձ կառուցած,  
Կաթիլ ջրից ըմպել սառած,  
Հոգի և կեանք զովացուցած,  
Սա այնչափ ցաւ չէ ինձ համար:

Գեռ չունեցայ էակ փունջեր,  
Սկսուել էր անթիւ խորչեր,  
Վարդ և կոկոն թառամած էր  
Տերելն իմ գունաթափ էր,  
Սա այնչափ ցաւ չէ ինձ համար:

Արմատն իմ ծարաւութիւնից  
Զորանում էր հողի միջից  
Ճածանելով բոյսն իմ քաղսւեց  
Զորանալով ջուրն իմ ցամքեց,  
Սա այնչափ ցաւ չէ ինձ համար:

Մի պատուական հոտ բուրում էր,  
Երբ տեսնէիր ընքոյշ վարդ էր,  
Դալար տերե գեղեցկասէր,  
Ես չնւնեցայ պարտիզատէր.  
Սա այնչափ ցաւ չէ ինձ համար:

Որ աննման ծաղկուն պտղին,  
Որպէս անպէտք ինձ այրեցին  
Ծուխ բարձրացաւ ահա փոշին  
Խաւարեցաւ լոյս իմ բաժին  
Սա այնչափ ցաւ չէ ինձ համար:

Բազարատիս սա է յարմար,  
Ծնայ աշխարհ լինչու համար,  
Ասա ինձի, ինչպէս յարեար.  
Վարդի շարքից անհետացար  
Ահա էս սոսկ ցաւ լինձ համար:

9-ն Յոհանիսի:



Ո Ր Ի Ւ Բ Ո Ղ Ո Վ

Ես եմ որբիկ եօթնամեայ,  
Ծնողը չըկան տէրս նվ ա  
Ամբողջ օրով բաղցած կեցայ,  
Ո՞վ բախտ, փրկէ, թէ հնար կայ,  
Անգութ բախտը խղճայ թէ զայ:

Մուրացկանի օրը վատ է,  
Ամենայն մարդ չի ինայէ,  
Գատող չըկայ նւմ որդին է  
Ամեն դռան նա տնանկ է  
Անգութ բախտը թէ խնայէ:

Ճատ լինդունունակ երեխայ եմ  
Ում որ տեսնեմ, ես կաղերսեմ,  
Մանկիկ լեզուավ կ'արտասանեմ,  
Խնամք արէք, վիճակ չնւնեմ  
Անգութ բախտին ես կ'ազաշեմ:

Որբիկ թշուառ ես մանուկ եմ  
Արտասուրս հեղեղում եմ  
Ուսումնարան տանող չ'ունեմ  
Ո՞վ Արարիչ, ես տէր չ'ունեմ,  
Անգութ բախտին ես հեռու եմ:

Աշակերտներ կարգով եկան,  
Ինձի տեսան, շուտ հեռացան,  
Ես խնդրեցի մի քիչ խօսան  
Ճատ ծաղրելով աղքատ անբան  
Անգութ բախտը չըթողեց զան:

Բաղարատ, ուրբը թշուառ է,  
Ուրախ օր չունի, կեանքը վատ է,  
Որբանոց չըկայ որ դիմէ  
Տէրը կորուցած կըշրջէ  
Անգութ բախտը թշնամի է:

10-ն Յունիսի:



Ս Ե Ւ Ո Բ Ե Ր

Սև օրեր, ծծեցէք սրտիս արիւն  
Սիրում էի կեանք և բարի անուն  
Ունէի վարդ աստղեր նոյնպէս փայլուն  
Ճակատագիրս ոև եղաւ լեցուն:

Պարզ օրերս սև եղան ու մթնեց,  
Սև փոսի մէջ երբ ինձ մղեց, փակեց,  
Ալրող կրակ երկնից բացեր թափուեց  
Հոսում էր արիւն, սիրտս կծկուեց:


Լուռ պէտք է կուլ տար այն փոսը ինձի,  
Ունէի ես սիրոյ գործեր սրտի,  
Մնաց թերի բոլորը շի լսուի,  
Կալոտելով լոյս օրի և կեանքի:

Աւաղ ինձի լոյս չըմնաց հանգաւ,  
Ծագիկ կեանքս սեագոյն ներկուաւ.  
Փոս պարիսպը ինձ համար ամրացաւ,  
Մի ամպ պատեց, վէրքերս սաստկացաւ:

Մօտ էր վախճան, չըկար կեանքիս մի տէր,  
Ո՞ւր է օգնող, սև օրից ազատէր,  
Չըլսեցի, մի բժիշկ փորձ անէր,  
Այս մըրիկից ինձ հեռացնէր:

Սև օրերն ինձ կարգով սեացուց,  
Վառ եռանդս մարմնուս մէջ սառեցուց,  
Հոգիս առաւ, վառ լապտերս հանգուց,  
Բաղարատս օրերն այսպէս անցուց:

11-ն Յունիսի:



Ա Պ Պ Ե Հ Յ

Թէ որ մահը սոսկ վճիռով ինձ հանդիպէր,  
իւր սև դէմքով անհուն ժպիտով իջնէր իմ դէմ  
զորիանան ցաւը և իմ հոգիս աւանդէր,  
Այնժամ զիտցէք, որ դեռ կենդանի եմ:

Ո՞հ, սառ դէմքիս գրուած տառեր իմ ճակտիս  
Եթէ հնչէ տխուր ձայնը օրը վերջիս,  
Եթէ մարդիկ որք սև ունին փոքր դէմքիս,  
Այնժամ զիտցէք որ դեռ կենդանի եմ:

Սուր և տխուր աղօթք կարդան ինձի վրայ,  
Եւ հեծեծմամբ իմ սիրելիս մօտս կուգայ,  
Ցիշատակս տեղս թողնելով ես հանդչայ  
Այնժամ զիտցէք, որ դեռ կենդանի եմ:

Թող ժողովին իմ սիրելիք, հեռանում եմ  
Հայնով կարդան քառաթեսվ ինձի տանին  
Սրտեր ողբան և հեկեկան մարդկային,  
Այնժամ զիտցէք, որ դեռ կենդանի եմ:

Սառ մարմինս փաթթեն, դնեն դագաղը  
Համասփուեն անուշահոտ խունկ և ծածկոց  
Դանեմ հանդիստ իմ դամբարան հողաբարձը  
Այնժամ զիտցէք, որ դեռ կենդանի եմ:

Ահա ծածկեց հոգէ վերմակ ննջում էի,  
Բարի զործս, յիշատակս երբ թառամի,  
Իսկ այն նշան եթէ մնաց անուն երկրի,  
Բագարատս այնժամանակ կը մեռնի:

12-ն Յունիսի:



ԱԶ ՄՏԵՑԿԵՆ ԵՒ ԱԶ ԲՆԵԿԵՆ

Խղճալի զրկուած անմեղ արարած  
Բնական չունիս ինքդ աւերուած,  
Ստացական չըկայ, ինչու նմանած,  
Պատկերով մարդ, հէշով բազկացած,  
Ճարժական արձան այս աշխարհի անբան:

Գլուխդ գատարկ, ստամբսդ պաշտող  
Մանկութիւնից ես զուրկ, ովէ քո ծնող,  
Խելքից գու ես ազրատ, օդումը չնշող,  
Խերնաշարժ մեքենայ, կոպիտ գործող  
Ճարժական արձան, այս աշխարհի անբան:

Թէ որ բախտ ունենաս, գանձ ևս բազում,  
Մի գուցէ առժամանակ լի զրպանում  
Գու ոշինչ ես կարկատանով շատ տեղում,  
Ինչ լինելդ մարդիկ շուտ են նկատում,  
Ճարժական արձան, այս աշխարհի անբան:

Աշխատի ուսման ձեռվ գու վերանաս,  
Գանձերով չըփստահիս, գեռողանաս,  
Խելքի տկար, թէ որ ուսում չ'ունենաս,  
Մեարզուած ես, թէ որ գանձ ալ ունենաս,  
Ճարժական արձան, այս աշխարհի անբան:

Բառաշում ես, որպէս ոշխար չնշում ես,  
Փողովի մէջ քեզ նախագահ կը հաշուես,  
Զգոյշ եղիր, տեղդ կեցիր, լուրջ լսես,  
Իսկ ծանր չես, թեթենալու ինչ ունիս,  
Ճարժական արձան, այս աշխարհի անբան:

Ներող եղիք, Բագարատս նկատեց,  
Համբերում եմ, իմ խօսքերս կրճատուեց,  
Ես ինչ անեմ գիտութիւնը պահանջեց,  
Բոլորովին այլակերպ ես, մարդու ցեց,  
Հարժական արձան այս աշխարհի անբան:

13-ն Յունիսի:



ԲԵՐԻ ՆԵԽԵՆՉ ԹԵ ՈՒՆԻՍ

Ո՞ւնիս բարի նախանձ, ունիս ապագայ,  
Թէ որ քո մէջ սիրտ և եռանդ միշտ շրկայ,  
Թուլամարդ ես, քո գլուխը խելք շրկայ,  
Քեզ նմանը զուրկ է, չ'ունի ապագայ:

Թէ որ ցանկաս, յարդէ բարի նախանձը,  
Բարձր պահէ քո ունեցած պատիւը,  
Թէ որ ուզես գերազանցել քո անձը  
Պատուով ապրիր, մաքուր կեցիր աշխարհը:

Սորանը չ'ունիս, զրկուած ես մարդկանցից,  
Մաս մի չ'ունիս, ուր որ լինիս երամից  
Աքսորում ես հարազատից, քո ազգից,  
Յետ ես մնում գու չքաւոր լաւ օրից:

Լաւ նախանձը առաջելու նշան է,  
Ընթանում է միշտ առաջ ու փայլում է,  
Ընդհանուր բարութեան գործը ձեռին է,  
Ճառեր բառեր, գովասանք թափում է:

Անբան մարդը մի թոյլ էակ շրջում է,  
Զորքոտանի անասունի նման է,  
Ման է գալիս քնած կերպով, միշտ յետ է,  
Սպասում է մինչև կեանքին վերջ դնէ:

Բագարատս կանգնած՝ լաւին յարգում է,  
Անպիտաններին միշտ վատարանում է,  
Սսելով, խրատելով մի կերպ ուզգէ  
Թոյլին շրկարողացայ կարդի դցել:

14-ն Յունիսի:



Մի ՍիրՏ Լինինի

Մի սիրտ լինինք և մի հազի,  
Միութիւնն է զարդ կեանքի,  
Ուսումն է պէտք նեղ օրելի,  
Միրւում է նա ամեն մարդի:

Մարդիկ կեանքին նայեն աշօք,  
Ամուր գրկեն երկու ձեռօք,  
Առաջ տանեն մի է սիրողը,  
Խորին խօսին միասրտօք:

Մարդասէրներ, առաջ եկէք,  
Բաւական է, հեռուն խօսէք,  
Գիտութիւնը մեղ հասցրէք.  
Զէ որ գուք ալ հեռատես էք:

Գիտնականը լուրջ նայում է,  
Հեռուն կեցած՝ միշտ զիտում է,  
Յովսեր չ'ունի առաջ տանէ  
Ո՞վ է նորան ցաւեցրէ:

Մենք ալ նման քեզ պէս մարդ ենք,  
Թէ խրատես, շուտ կըլսենք,  
Մենք զգում ենք, որ անկիրթ ենք,  
Իսկ անասնեաց շարբեր կազմենք:

Ամենայն մարդ չէ լինդունակ,  
2ըմորթէք մեղ միադանակ,

Ով աշխատի, նա լինդունակ,  
Դուք ալ մեղ պէս անկիրթ ծնաբ:

Հիմա լինքդ շատ փոխուած ես,  
Անկիրթներու խօսքը լսես,  
Թէ որ կըթես գիտնական ես,  
Երբ խնդիրս դու չըմերժես:

Բագարատս կ'աւետէ  
Մութ սենեակում թէ լոյս սփոէ,  
Ով է յարգող նա կըհարթէ  
Զգայունը կըբողոքէ:

14-ն Յունիսի:



ԱՀՈՂ ՕՐԵԲ ԿԸՀԱՆ ՈՒ ԳՆԱՆ

Աջող օրեր գալինան նման եկան ու գաղթան,  
Ուրախանալ չէ հարկաւոր, մի քիչ կըմնան.  
Յանկարծ տեսար, վարդի նման շուտով թոռման,  
Որպէս պատահական հիւրեր, թող գան ու գնան:

Մարդիկ սպասում են նորանց, երբ որ հանդիպան,  
Հիւրափրում են, մշտական իւրեանց մօտ մնան.  
Վատ օրերը մարդկանցից դժուար կըհեռանան,  
Տարիք, ամիսներ, կարգ-կարգ թող գան ու գնան:

Վատ օրերը մութ են և խաւար ձմռան նման,  
Վհատուել չէ հարկաւոր զորանք վերջ կ'ունենան  
Եյսրան տարիք ինչպէս եկան այնպէս հեռացան,  
Աջող օրեր չեն սիրում մեղ, թող գան ու գնան:

Զախորդ օրեր վէրբի նման մեղ հետ ծնան,  
Տխուր օրեր արագ-արագ առաջ ընթացան,  
Համբերութեամբ թէ որ մենք տանենք անցկենան,  
Եշխարհը պարտէղ մարդիկ ծաղիկ թող գան ու գնան:

Ճին ընարը երգում է ունի անուշիկ ձայն,  
Եշխարհն է գովում, մարդիկ իրար մօտ հաւաքուան,  
Ահա նոր կեանք և տարիք, ամիսներ անկացան,  
Մեծ խմբեր այս ճանապարհից թող գան ու գնան:

Տկարները տքան ուրախանան երգն զրոսանան  
Անաջող օրեր թող թռչին շուտ անհետանան,  
Մեռնողը գնաց, առողջը մնաց թոյն կըտան  
Բագարատ, դու գիտցիր հերթով կըդան ու կըդնան:

15-ն Յունիսի:

ՄՐՑԱՋԻՆ ԶԵԽՈՎ ԵՊԱՅՑ

Մէկ օր երկաթուզով գնում էի,  
Վագոնի մէջ կար մի սղորմելի,  
Սրտաքին կերպով նման էր հայի  
Փոքրիկ կոյր երեխայ մի հետը ունի,  
Ասի, ինչ մարդ ես:— ասաւ,— Զորլեցի:

Հարցը.— Ո՞ր ես գնում.— Ասաւ— Թիֆլիս.  
Երեխան տանեմ բժիշկը տեսնի,  
Պատմեց իւր ցաւը որ տոմսակ չ'ունի,  
Խնդրեմ ինձ օգնէք, շատ էր նա լալիս,  
Փող հաւաքեցինք, ես նորան տուի:

Այդ աղքատ մարդը բոլորիս խարեց,  
Կարճ միջոց անցաւ, միտս բացեց,  
— չայ, սուտ ես խօսում.— Նա գունաթափուեց,  
— Լեզուդ տարրեր է.— իսկոյն շփոթուեց,  
Ասաւ.— գաղթական եմ, կամաց խօսեց:

Ճանաշեցին, որ Փալուտիցի է,  
Իւր համար ապրելու միջոց ունէ,  
Ճրջմոլիկը ինչ էր մտածէ,  
Այժմս ում հաւատաս որ աղքատ է  
Արտաքին աղքատ, ներքին հարուստ է:

Բագարատ այժմեան գարին գարմացիր,  
Կոպէկներդ պահիր, մի սխալիր,  
Խարեխայի մօտ անողորմ եղիր  
Դարից զգուշացիր, քեզ պաշտպանիր,  
Ճշմարիտ չ'ունէ որ քիչ կը ճարուիր:  
16-ն Յունիսի

ՅԵՐՄԵՐ ԹԻՒՐԻԴ ԱՆԻՇԽԵՑՅԱՆ ԿԵՊԸ ԵՊՅՈՐ

Երբ որ յաջողակ էինք; օրելու էր ուրախ,  
Փողեր վաստակում էինք հեշտութեամբ անկախ  
Ես ճշմարիտ, զու խորամանկ, բնութեամբ ձախ,  
Ասում էիր եղբայր ենք հարազատ, անվախ:

Ուր մնաց ճշմարտութիւն և եղբայրութիւն,  
Ուր գնաց միութիւն, և մեր հարստութիւն,  
Ինձ բաժին չըտուիր, կարծեցիր հաստատութիւն  
Զըհողացիր, ես էլ ունիմ աշխատութիւն:

Զըկեցիր, կողոպտեցիր, բերիր դառնութիւն,  
Ուրախ կանգնած՝ զու զործում էիր չարութիւն,  
Ո՞վ է սպասում խարդախից մի բարութիւն.  
Ո՞վ անիրաւ, զցիր սրտումս տիրութիւն:

Ես գնում եմ, մնաս բարեաւ, չըմոռանաս,  
Ալօթում եմ, կեանքումդ լաւ օր չ'ունենաս  
Պաշտէ մամոնան, կեղտոտութեամբ զօրանաս  
Զըմտածես, երկար ապրիս ու ծերանաս:

Թէ որ ապրեմ ես քո պատճառով չըտոր,  
Մնում է անուն քո կեղտոտ հին և նոր,  
Ուտում ես միննոյն, հագնում ես մի ձեռք չոր  
Մէկ օր կըկարգան քո վերայ մահուան օրօր:

Բակարանտ, թնդ զրկէ բանի որ ուզում է,  
Կըգայ օր, որ աշխարհը նորան կըլափէ.  
Կարծում է թէ կեանքը իր համար պարիսպ է  
Բլշում է պարիսպը, իւր մահն էլ ինձ պէս է:

17-ն Յունիսի:



Հ Ա Ս Կ Ա Ց Ն Ե Լ

Ամենապլիսաւոր մի գործ է սա  
Յիմարին մի քանի հարցեր ասա  
Ոշինչ շըգիտէ և չի հասկանայ  
Պատասխանը թերի և թոյլ կըտայ:

Մեծ ուսում է հասկացնել սորան,  
Զուր է ասել, չունի բնական,  
Ինչքան որ կրթես, կըմնայ անբան,  
Թէկուզ կեանիր զոհէ, չունի նա պայման:

Լաւ անասունը տգէտից բարձր է,  
Նա չի խօսում, քեզ չի վշտացնէ,  
Տգէտին խօսար, շուտ կը յանդիմանէ,  
Փոխանակ լսելու, լաւ կ'անպատուէ:

Ի՞նչ դժուար է մարդկանց կարգի բերել  
Ենկրթութիւնն ամուր է զրկել  
Նման մի կոյտի ցոփութիւն տիրել  
Թէ զիազում ես, տեսնես բռնկել:

Յիմարը իրան բարձր կըգասէր,  
Կարծելով իրրի մի մեծ խելք ունէր,  
Հաշուելու լինիս, ինչն նա պէտք էր,  
Իմաստունը միշտ ցածրից կ'սկսէր:

Բագարատ, տգէտը դատէ թնդ խօսի,  
Լոէ ու գործէ խելքով շարշարուի.  
2ի առաջ գնում գործը յիմարի,  
Աշբերը փակած, մտքից լոյս կ'անցնի:

19-ն Յունիսի:



Ա Յ Ե Ն Ց Ե Ե Լ Է

Ես յիշում եմ իմ անցեալս,  
Հայրս, մայրս, ուրախ կեանրս,  
Ինձ ասելով որդեալս  
Չափ չըկար ուրախութեանս:

Երբ մեծացայ, հոգսեր եկան,  
Ծնողը ինձի անբախտ ծնան,  
Աշխատութիւն ուժից անցան,  
Հանգիստ օրեր ինձից փախան:

Ո՞հ, իմ օրեր, ո՞հ, իմ վշտեր,  
Հանգիստ ժամեր, ուր են կորեր,  
Բնութիւնն ինձ է պատժեր,  
Իմ ցաւերս բժիշկ լսէր:

Ճշմարտութիւն ինչու է պէտք,  
Ասեմ, խօսիմ, մօտս եկէր,  
Մողնի հազէր, կեզծ մարդ եղէր  
Դուր զրկեցէր, ում որ կ'ուզէր:

Մտածում եմ մարդ չըխարեմ  
Հոգով պէտք է պատասխանեմ  
Հասակս առնեմ, մահ կըզտնեմ  
Լաւ կըլինի մաքուր մեռնեմ:

Բայց դատարկ է այս իմ միտքս  
Ում հանդիպայ, նա խարում էր

Ճշմարտութիւնը մի քարոզեր,  
Ես զրկել եմ ուղիղ դործքս:

Յետ է գնում միշտ հանապազ,  
Ինձ ծաղրում են տանկ և տնազ  
Թէ որ երգիչ, ուր է քո սազ  
Հարցն է բարակ, որպէս մի մազ:

Ճշմարտութիւն միշտ թակում է,  
Ազբատութեան ճանապարհ է,  
Այսպիսի մարդ սոված մահ է,  
Ուղղութիւնը յետ գնում է:

Բնութիւնս բնական է  
Ինչքան սանձեմ նա կըզործէ,  
Ուղղութեանը լսողն ով է  
Յաղթութիւնը ստի կողմն է:

Վատ օրեր տեսայ անհաշիւ  
Անրախտութեանս չըկար թիւ  
Զարդեց ինձ ֆռուազվ անիւ  
Մենամարտում էի խստիւ:

Ո՞վ Բագարան, հանգստացիր  
Յաւոց աշխարհ դու իմացիր,  
Բախտ որ շնոնիս, դատարկ կեցիր,  
Յոյսդ կտրիր, մի լաւ տիրիր:

21-ն Յունիսի:

Ա Զ Ե Ւ Ի Ւ Խ Ս Ս Ք

Աղնւութիւն, կընմանիս սուրբ օրէնքի,  
Մարդը կանգնած ըռ անունով միշտ կ'երգուի  
Խոսք եմ տալիս աղնուօրէն ամսւր կեցիր  
Մաքուր խօսքիս վկայ Աստուած, թող նա լինի:

Սպասում եմ մինչև որ խօսք կատարիր,  
Հեղուիդ նման հոգիդ ու սիրտդ թէ լինէր,  
Նկատում եմ, առաջներդ դու մերժեցիր,  
Աղնւութիւնը մէջ բերելով՝ խարեցիր:

Աղնիւ խօսքը սուրբ գրրումն է մնացել,  
Մարդուն վայել է, որ իւր խօսքին միշտ կանգնէր,  
Բանական մարդուն այդ վարքը չփ վայելէր,  
Քո արած խարեբայութիւնը ծայրայեզ էր:

Քանի զործը տաք էր, լեզուդ սոխակի պէս,  
Երգում էիր անուշիկ, հիմա քեզի տես,  
Աղնւութիւնը մոռացար, սուտ կըխօսես,  
Ուրախացիր, հչինչ, դու էլ հոգուտ պէս սկ ես:

Գու քո պատիւը շօշափեցիր, ինչ արիր,  
Անդաւոր աշխարհ մահ կայ, դու լաւ գիտցիր,  
Հասարակ շահի համար հոգիդ կորուցիր,  
Ճշմարտութիւնը մի փոքր գործ հաշուեցիր,

Ճիկ թափում ես օգտիկ համար, շահի ինչ է,  
Մաքուր կեցիր, ուղղութեամբ Արարիշ կանչէ,

Աղնւութիւնդ գանձի համար մի ծախէ,  
Ինչ լինելդ մարդիկ կըլսեն, պատիւ չէ:

Ինչըան տեսմ, քո գիտցածը դու լաւ գիտես,  
Բնական է, ով կ'ստիպէ, որ կըխօսես,  
Քաջ յայտնի է, մինչև վերջդ այդ վարքն ունես,  
Զգուշացիր, մի օր կըդատապարտուես:

Բագարան, աղնիւ խօսքը սրտի խորքն է,  
Պէտք եղած ժամանակ երեսն կըհանէ,  
Մարդկանց հաճեցնելու համար ցոյց կ'անէ,  
Երբ որ խարեց, այնժամանակ կըթաքցնէ:

21-ն Յոնիսի:



ԳԵՐՆ ԱՆԱՄՅՈԹԻՆՆ է

Անամօթ մարդը ծառայում է իւր կամքին,  
Մշտական ընկեր է լինում անառակին,  
Գաղտնի կերպով որոգայթներ կըպատրաստուին,  
Վատ դարի հետ նորանք ուղիղ կըգնային:

Այսպէս մարդը միշտ կըկողոպտէ զէպ իրան,  
Վատերի մէջ չըկայ սրա պէս աննման,  
Հատ-շատերը սրա թակարդին հանդիպան,  
Յանկարծ ընկան, մինչև ի մահ խեղդուեցան:

Ստում է սուրբ զիրքը և ճշմարտութիւնը,  
Հեռու է սրանից բարեկամը, ոէրը,  
Ուրացել է հաւատը, ազգութիւնը տէրը,  
Չի ուղում աշխատել, կողոպտելն է գործը:

Պատկառանք չ'ունի սրտի մէջ ամենևին,  
Թէս պատկերով սա էլ մարդ է արտաքին,  
Նա սիրում է իրատես, թքես երեսին,  
Սրապէսները ժանդ են մարդկային ազգին:

Վատը մինչև չըլինի, լաւը չի ջոկուի,  
Չարը մարդկանց մօտ նշանակութիւն չ'ունի.  
Իրա վատ գործերով զոյութիւն չի գտնի,  
Թոյն ընդունած գաղանի պէս կըթափառի:

Ո՞վ անմեղ մարդիկ, զգնյշ եղէք տեսնելիս,  
Արտաքին մարդ, ներքինը գաղան է գալիս,

Սա վարակիչ տկար է, ձեզ ցաւ է տալիս.  
Մեղմ խօսքից, բազցը լեզուից վարժ խօսելիս:

Նա ընդունակ է իւր արհեստի գործերին,  
Որքան թքնես, չի ամաչում անամօթին,  
Նա հաշում է, ամօթն ինչ է խօսին, անցնին,  
Կեղտոտ ծնաւ, վարակիչ կ'անուանէին:

Բազարատ պատիւ ասած բանը շատ թանգ է  
Ով որ սիրում է, նա վեհանձն է և մարդ է,  
Քաղցած մնայ, երբէք մէկին չի վնասէ,  
Լաւն անվնաս է, վատն ինչու պէտք է:

22-ն Յունիսի

## ՓՇԿ ԴՐԱՄ, ԲԵՑ ԴՐԱՄ

Ես եմ բաց գուռ մարդկանց համար,  
Ուստի սիրողն ինձ մշտ թնդ գար,  
Աշխատելով ինձ հետհար,  
Ուսման կարգն ինքդ անցար:

Անուսումի գուռն է փակ,  
Հետո յա ի՞ն  
Տէր կարող որ գոցը բանաք,  
Անկիրթ մարդիկ յետ կըմնաք,  
Խղճալինեմ, լոյս շրտենաք:

Պայծառ սենեակ, օդը մաքուր,  
Գրեմ, կարգամ ես ընդհանուր,  
Մարդուս չէ պէտք մնալ միշտ կոյր,  
Վարժարանից լոււաւ մեծ լուր:

Գուշակ կերպ ես, անկիրթ անբան,  
Քեզ ատելով դարեր անցան,  
Քո պատկերիդ պատկառանիք կան,  
Քեզի նայող մինչ յետ փախան:

Ամենայն մարդ ունի հայրիկ  
Կան որ մարդիկ չ'ունին որդիք  
Ուսումնարանն ունի որդիկ,  
Որը նա չէ, թէ սովորիք:

Բագարատիս մի դուռ չըկար,  
Որ աշխատէր, ինքը բանար,  
Լսել եմ որ մի բաց դուռ կար,  
Ինձի ոչինչ այդ մաւ համար:

## 25-Ի ՑՈՒՆԻՄԱՒ:

Հայութ ու բանակը ԵՊ  
առ պահի ո՛վ մօքք Ա՛ ա՛  
անսուն ու մասն ու մ  
  
անսուն ու գալուստը  
արդ պահ ու պարփ  
լուսն զիշտար մաս  
պար ու եղ պատեմ Ա  
անսուն ու մօքք ԵՊ  
առ պահի ո՛վ մօքք Ա՛ ա՛

ՀՅՆԳՈՒՑԵԸ ՀՅՑԲԻԿԻՍ ԵՐԳԸ

Մէկ տղամարդ որ պսակուի,  
Տես թէ զլխին ինչ փորձեր կայ,  
Իւր ծնողըն որ ուրանայ,  
Սիրուհու հետ պտոյտ կըգայ:

Գերդաստանը որ շատանայ,  
Փողերի ալ վերջը կըգայ,  
Բարի զաւակներ ունենայ  
Մեքենայի ոյժ մը կըգայ:

Սիրով գործն ու միանան,  
Հարստութիւն ինքնին կըգայ:

1888 թ. 35-ն հոկտ.

ԳԵՐԴԱՏԱՆԱԿ

Հասակ չ'ունիմ, ես ոյժ չ'ունիմ, ինչ անեմ,  
Ուսում չ'ունիմ, մի յոյս չ'ունիմ, ինչ անեմ,  
Օգնող չ'ունիմ, ահօգնական, ինչ անեմ,  
Ոսկերիչի գործիքներով, ինչ անեմ  
Զարչարուելով տանջրւում եմ, ինչ անեմ,  
Աղաբալեանց Բազարատս բախտ չ'ունեմ:



Ն Մ Ե Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Համբերութիւն, մեծ գիտութիւն,  
Անրախտութիւն դառ դրութիւն,  
Օտարութիւն, շար գերութիւն,  
Դանձ թէ բազում, փարթամութիւն,  
Ազքատութիւն է լուսութիւն,  
Թէ մահ, — կեանը իսազազութիւն:

1900 թ: 1-ն նոյեմբ.

ՄԵՅՐԸ ՈՐԴՈՒԿՆ

«Կապեմ քո գեղեցիկ աշեր,  
Ենուշ ըռմող ալ տարուբեր,  
Իմ գառնիկիս ըռմն է եկէր,  
Սիրոյ սրտից հնչէ օրօր:

Ես չեմ քնի, անզուժ մայրիկ,  
Չերիք աշերս կապես պնդիկ,  
Մի այլ ժամում կ'անեմ նանիկ  
ինձ արձակէ, մի ըսեր օրեր:

«Եյդ քո լեզուկ սիրեմ հիմա  
Գեղեցկապէմ լեզուդ բաց ա  
Քնիր, որդիս, յետոյ ասա,  
Աշուկ պահէ ասեմ օրօր:

—Մի քիչ թոյլ տուր կապանքներս,  
Այլ թմբեցան փափուկ մսերս,  
Ենուշ ձայնով նանիկ կ'ասես,  
Քնիլ չեմ ես, զուր է օրօր:

«Քնիր, քնիր, իմ ազանիս,  
Պահպանում եմ սիրոյ սրտիս,  
Գոմն չի լացած, իմ փոքրիկս,  
Ես ծիծ կ'ուտամ, կ'ասեմ օրօր:

Բաղարատս ծնող գոլով՝  
Երեխոցը պահպանելով՝  
Մայրի նամիկ ես լսելով՝  
Սէրն է երգում բազցը օրօր:



ԻՄ ՀՅԹՍ ՍԵԹԵՆԻԿԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Ո՞հ, ցաւալի ծաղիկ կեանքում ես խորշում  
Սոսկ վճիռը իւր ոև դէմքով քեզ է տանում,  
Ահա եկաւ հողէ վերմակ քեզ է ծածկում  
Ջողիացած ցաւօք սիրելիդ է բաժանում:

Ոհ, ցաւում եմ որտիս խորքից հեռանում ես,  
Այսօր հնչեց տիսուր ձայնը խոր ննջում ես,  
Զարթիր գոնեա ըո բառերով արտասանես  
Յաւիդ բժիշկ միթէ չըկար, որ վնում ես:

Անկեղծ հարս իմ վիշտ ու վէրքեր թողիր կրծքիս,  
Ամեն վարկեան պէտք է հրդեհես ցաւը կեանքիս,  
Հառաշում եմ խոր վշտերով ասլա խօսիս,  
Բիւր ցաւերով ծակոտեցիր իմ սիրելիս:

Ընկերիդ և որդոցդ միշտ սիրեցիր  
Կենսաբոյր կեանք պարզեցիր հոտ բուրեցիր.  
Վաղ թառամար, այսօր մահին դու դիմեցիր,  
Զաղիր ցաւիդ մարտնչեցիր յաղթուեցիր:

Իմ նազելի, մռայլ օրդ ես խօսում եմ,  
Ափսոս, ափսոս գաժան ցաւօք կորցնում եմ,  
Որբիկ, որդիր թողիր սորա ինչ անեն  
Նորանց սիրող, նորանց խնամող մայրիկ չունեն:

Կուտակեցիր սրտիս լարեր,  
Այլ չի հնչում սիրոյ երգեր,  
Վրդովում է ու լալիս,  
Բաղարատ ոև օրեր միշտ ունես:

Գ Բ Զ Ի Բ Ա Վ Ա Գ

---

Բովորելով իրաւացին զրում է,  
Ճարժելիս՝ փոքր ձայնով ճռճռում է,  
Պողբատ զրիչ, թանաքումը փթում է  
Փետուրը ուսումնարան կըրողորէ  
Սագի փետուրների համար ինչ, ոչինչ:

Նորը նոր է ընդունուած միշտ սիրում են,  
Հներին ալ հաստատութիւն կընաշունեն,  
Լաւը լաւ է, այս երկուսն ալ պէտք են,  
Ոչ թէ զանազանութիւն, երբ առողջ են,  
Սագի փետուրը համար ինչ, ոչինչ:

Բազարատ, զրչիդ ճռճռոցը կտրէ,  
Ճատերին ձանձրացնում ես կու լուէ,  
2ունիս գլորոցի վկայաթուղթ, ոչինչ է  
«Այբ» զրելով, «բենը» մտածելով ինչ է.  
Սագի փետուրն է զրիչ, — այդ ոչինչ:

26-ի Յունիսի:



Ց Ա Ն Կ

1 Եմ սրտի վէրքերը . . . . .	7
2 Տաղանդ . . . . .	8
3 Զարմանիր այս հարցին . . . . .	9
4 Բնութեան գործը . . . . .	10
5 Յաւալի վիճակ . . . . .	12
6 Աշխարհի թոյնը . . . . .	14
7 Վաշխառուն . . . . .	16
8 Ծառայող եկեղեցու . . . . .	17
9 Երջանկութիւն . . . . .	19
10 Տաճարի աղքատ . . . . .	21
11 Միմեանց ծուռ նայողներ . . . . .	22
12 Դաստիարակ ծնողը . . . . .	24
13 Ով մաքրութիւն . . . . .	26
14 Երախտագէտ . . . . .	28
15 Երախտամոռ . . . . .	29
16 Քնդհանուր մարդկանց հիւանդանոցը . . . . .	31
17 Փամանակի համեմատ . . . . .	33
18 Մի լինիր զոռող օրիորդ . . . . .	35
19 Միրէ լոյս . . . . .	36
20 Լոյս աշխարհ . . . . .	37
21 Սկիզբ ու վերջ . . . . .	39
22 Անինամք երկիր և զրութիւն . . . . .	40
23 Լաւ ու վաստ զրացի . . . . .	42
24 Զարդ ու փշուր աշխոյժ . . . . .	44
25 Համեստ կին . . . . .	46
26 Միութեան կոշում . . . . .	48
27 Բանաստեղծի նկատողութիւն . . . . .	49
28 Անդգամ կին և բարի այր . . . . .	50

29	Մարդու գոյութիւնը	52
30	Անողորժ հարուստ	54
31	Դժբախտ թռչուն	55
32	Ժողով	56
33	Պէտք է մեռնել	58
34	Պէտք է ապրել	61
35	Իմ ցաւը	63
36	Որբի բողոք	65
37	Սկ օրեր	67
38	Իմ մահը	68
39	Ոչ ստացական և ոչ բնական	69
40	Բարի նախանձ թէ ունիս	71
41	Մի սիրտ լինինք	72
42	Աչող օրեր կըզան ու գնան	74
43	Արտարին ձեռվ աղքատ	75
44	Յարմար օրերիդ ուրացող կեղծ եղոր	76
45	Հասկացնել	78
46	Իմ անցեալը	80
47	Ազնիւ խօսք	82
48	Դարը անամօթինն է.	84
49	Փակ դուռ, բաց դուռ	86
50	Հանգուցեալ հայրիկիս երգը	88
51	Դեռահասակ	89
52	Նմանութիւն	90
58	Մայրը որդուն	91
54	Իմ հարս Սաթենիկի յիշատակին	93
55	Գրչի բողոք	94

ՀՀ Ազգային գրադարան



NL0313008

18.518

